

**ՀՀ ԿԳՆ «Ա. ԵՐԶՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 118 ԱՎԱԳ
ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Դպրոցի տնօրեն՝ Կարինե Հովակիմյան

**ՀՀ ԿԳՆ «Ա. ԵՐԶՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ N° 118 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
2017-2018ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

ՀՀ ԿԳՆ Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունը պատրաստվել է դպրոցի տնօրենի՝ 2017 թ. սեպտեմբերի 5-ի հ. 63 հրամանով ձևավորված ներքին գնահատում իրականացնող հանձնաժողովի կողմից: Հաշվետվության պատրաստման համար հիմք են հանդիսացել դպրոցի ներքին գնահատման ցուցանիշները և չափանիշները, խորհրդակցական մարմինների կողմից դպրոցի գործունեության այս կամ այն ոլորտի վերաբերյալ տրված գնահատումները:

Ցուցանիշների և չափանիշների հաշվարկման ժամանակ կիրառվել են հետևյալ մեթոդները.

- ❖ վիճակագրական տվյալների վերլուծություն
- ❖ փաստաթղթային վերլուծություն
- ❖ դիտարկում կամ փաստագրում

Դպրոցի գործունեության ներքին գնահատման գործընթացը ներառել է հետևյալ երեք բաղադրիչները՝

1. մեկնարկային պայմանների (ռեսուրսների) գնահատում
2. գործունեության ընթացիկ գնահատում
3. գործունեության արդյունքների գնահատում

Ներքին գնահատման չափանիշները բխում են հանրակրթության պետական չափորոշյով սահմանված պահանջներից և ներառում են սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը, արժեքային համակարգի ձևավորումը, սովորողների զարգացմանն ուղղված գործողությունների առաջնայնությունը, ուսումնական հաստատության տարեկան աշխատանքային ծրագրում դրանց արտացոլումը, իրականացման արդյունավետությունը:

Մաս 1

Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին

Հաստատության անվանումը , համարը **ՀՀ ԿԳՆ «Ա. ԵՐԶՆԿՑԱՆԻ ԱՆՎԱՆ № 118 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ**

Հաստատության հասցեն
Հաստատության հեռախոսը
Էլեկտրոնային փոստը

ք. Երևան, Արզումանյան 8
(010) 39-10-70,
school118@schools.am

Այս մասում հիմնականում արձանագրվել են հաստատության գործունեությունը նկարագրող վիճակագրական տվյալներ, որոնք ներկայացված են ինչպես 2017-2018 ուստարվա համար, այնպես էլ նախորդ երկու ուստարիների հետ համեմատության մեջ՝ բացահայտելով այս կամ այն ոլորտը նկարագրող ցուցանիշների և չափանիշների փոփոխության դինամիկան:

Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Դասարանների թիվը	2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի	2017-2018 ուստարի	Փոփոխությունների դինամիկան(աճ կամ նվազում)
8-րդ դասարան	2	-	-	մարում
9-րդ դասարան	2	2	-	մարում
10-րդ դասարան	3	6	5	աճ, նվազում
11-րդ դասարան	3	2	5	աճ
12-րդ դասարան	5	3	2	նվազում
Ընդամենը	15	13	12	նվազում

Դասարանների թվաքանակի փոփոխությունները պայմանավորված են՝

1. հիմնական դպրոցի դասարանների մարման գործընթացով,
2. 2006 թ. 1-ին դասարան ընդունված՝ 6 և 7 տարեկան սովորողների տարբերակումով (7 տ. սովորողների մեխանիկական թռիչք հաջորդ դասարան), ինչի հետևանքով հանրապետությունում զգալիորեն պակասել է հիմնական դպրոցների և՛ 2013-2014 ուստարվա, և՛ 2014-2015 ուստարվա շրջանավարտների թիվը. արդյունքում ավագ դպրոցում նույնպես 2014-2015 և 2015-2016 ուստարիներին նվազել է 10-րդ դասարանների թիվը, իսկ 2016-2017 թվականին՝ աճել, ինչի հետևանքով այս ուստարում փոքր է 12-րդ դասարանների թիվը, սակայն մեծ է 10-րդ և 11-րդ դասարաններում սովորողների թիվը:

Աղյուսակ 2. Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Սովորողների թիվը	2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի	2017-2018 ուստարի	Փոփոխությունների դինամիկան(աճ կամ նվազում)
9-րդ դասարան	42	46	-	աճ,մարում
10-րդ դասարան	45	112	119	աճ
11-րդ դասարան	68	44	105	նվազում,աճ
12-րդ դասարան	97	65	42	նվազում
Ընդամենը	297	267	266	նվազում

Ըստ դասարանների սովորողների թվի փոփոխությունները պայմանավորված են.

1. 2006 թ. 1-ին դասարան ընդունված՝ 6 և 7 տարեկան սովորողների տարբերակմամբ (7 տ. սովորողների մեխանիկական թռիչք հաջորդ դասարան), ինչի հետևանքով հանրապետությունում զգալիորեն պակասել է հիմնական դպրոցների և՛ 2013-2014 ուստարվա, և՛ 2014-2015 ուստարվա շրջանավարտների թիվը. արդյունքում ավագ դպրոցում նույնպես 2014-2015 և 2015-2016 ուստարիներին նվազել է 10-րդ դասարաններում սովորողների թիվը, իսկ 2016-2017 ուստարում

10-րդ դասարանում սովորողների թիվը աճել է: 2017-2018 ուստարում 10-րդ դասարան ընդունվածների թիվը եղել է 119-ը, որը ավելին է, քան նախորդ տարվա ընդունվածների թիվը, սակայն տարվա ընթացքում 10-րդ դասարանցիների թիվը նվազել է 10-ով (նրանց մի մասը տեղափոխվել է արտերկիր, մի մասը ընդունվելուց հետո է զգացել հեռավորության դժվարությունը).

2. առանձին գործող ավագ դպրոցի համակարգի կայացման անցումային շրջանի խնդիրներով.

անցումային փուլի ավարտից հետո սովորողների թվի փոփոխություններ քիչ կլինեն.

3. սովորողների՝ բնակության վայրի փոփոխությամբ պայմանավորված շարժով:

Աղյուսակ 3. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշը	2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի	2017-2018 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	297	267	266	նվազում
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	290	267	250	նվազում
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	12	10	9	նվազում
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	19	10	25	նվազում ,աճ

Սովորողների թվաքանակի փոփոխությունը պայմանավորված է՝

- *հիմնական դպրոցի դասարանների մարմամբ, 2006 թ. 1-ին դասարան ընդունված՝ 6 և 7 տարեկան սովորողների տարբերակմամբ (7 տ. սովորողների մեխանիկական թռիչք հաջորդ դասարան), ինչի հետևանքով հանրապետությունում զգալիորեն պակասել է հիմնական դպրոցների և՛ 2013-2014 ուստարվա, և՛ 2014-2015 ուստարվա շրջանավարտների թիվը. արդյունքում ավագ դպրոցում նույնպես 2014-2015 և 2015-2016 ուստարիներին նվազել է 10-րդ դասարաններում սովորողների թիվը, իսկ 2016-2017, 2017-2018 ուստարին 10-րդ դասարան ընդունվածների թիվն աճել է:).*
- 2. *առանձին գործող ավագ դպրոցի համակարգի կայացման անցումային շրջանի խնդիրներով. անցումային փուլի ավարտից հետո սովորողների թվի փոփոխություններ քիչ կլինեն.*
- 3. *սովորողների՝ բնակության վայրի փոփոխությամբ պայմանավորված շարժով:*
- *ավագ դպրոցների մասին տեղեկատվության բացակայությամբ, ծնողների կողմից բարձրագույն ուսումնական հաստատությունների հենակետային դպրոցներին (որոնց թիվն անընդհատ աճում է) նախապատվություն տալու հանգամանքով:*

Աղյուսակ 4. Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ցուցանիշը	2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի	2017-2018 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր թիվը	30	28	27	նվազում,անփոփոխ
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույթաչափը	18,1	19,3	19,3	աճ

Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածության փոփոխությունը պայմանավորված է.

- Նախորդ ուստարիներին՝ հիմնական դպրոցի մարմամբ (ուսումնական պլանով նախատեսված որոշ առարկաների ժամաքանակը տարեցտարի նվազում էր դպրոցում, ինչի հետևանքով նվազում էր այդ առարկաների ուսուցիչների ծանրաբեռնվածությունը, որն ազդում էր միջին ծանրաբեռնվածության ցուցանիշի ձևավորման վրա)։ 2017-2018 ուստարում այդ խնդիրը չկար։
- սովորողների թվի նվազմանը զուգահեռ՝ նվազում է նաև ժամաքանակը, և քանի որ առաջիկա տարիներին կանխատեսվում է սովորողների թվի աճ, հետևաբար նաև ժամաքանակի աճ, ուսուցիչների կրճատումներ չեն կատարվում։

Աղյուսակ 5. Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար

Ուսուցիչների թիվը	2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի	2017-2018 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	5	3	1	Նվազում
30-ից 40 տարեկան	1	2	4	Աճ
40-ից -50 տարեկան	9	5	3	Նվազում
50-ից -55 տարեկան	6	8	8	Անփոփոխ
56 տարեկան և ավելի	9	10	11	Աճ

Ուսուցիչների տարիքային կազմի փոփոխության պատճառները՝

- տարիքային համաչափ փոփոխություն

Աղյուսակ 6. Տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ

Պաշտոնը	Անունը, ազգանունը, հայրանունը	Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը	Տվյալ հաստատության աշխատելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Տնօրեն	Հովակիմյան Կարինե Կարլենի	12 տարի	12 տարի	Պատվոգրեր, շնորհակալագրեր ՀՀ ԿԳՆ հուշամեդալ
Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով	Օզանեզովա Մարիցա Ռոբերտի	7 տարի	26 տարի	-
Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով	Մինասյան Նաիրա Գառնիկի	6 տարի	25 տարի	-
Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով	Պետրոսյան Արևիկ Դավիթի	5 տարի	3 տարի 5 ամիս	-
Տնօրենի տեղակալ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով	Ասկիջյան Հերմինե Աշոտի	6 տարի	9 տարի	-

Աղյուսակ 7. Տվյալներ ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ

Անուն, ազգանուն, հայրանուն	Աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը	Կրթությունը	Հաստատության խորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Սարգսյանց Լեյլի	ՀՀ կրթության տեսչական մարմնի ՌԳՄՊ ՎԳ բաժնի գլխավոր մասնագետ	բարձրագույն	2016 թ. հուլիսի 26-ից	
Դավթյան Տիգրան	«Երևանի էստրադային և ջրագային արվեստի քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն	բարձրագույն	2016 թ. հուլիսի 26-ից	
Զալինյան Թամարա	ՀՀ ԿԳՆ սփյուռքի հետ կապերի բաժնի գլխ. մասնագետ	բարձրագույն	2016 թ. հուլիսի 26-ից	
Գասպարյան Արսեն	Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչ. երթևեկութ. կառավ. բաժնի պետ	բարձրագույն	2016 թ. հուլիսի 26-ից	
Մինասյան Նաիրա	ՀՀ ԿԳՆ Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոցի տնօրենի տեղակալ	բարձրագույն	2016 թ. հուլիսի 26-ից	
Հակոբյան Մոնյա	ՀՀ ԿԳՆ Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոցի ուսուցիչ	բարձրագույն	2016 թ. հուլիսի 26-ից	
Թադևոսյան Մանե	Տնային տնտեսուհի	բարձրագույն	2016 թ. հուլիսի 26-ից	
Դանիելյան Անահիտ	«Լուսին» ՍՊԸ իրավաբան	բարձրագույն	2017 թ. Դեկտեմբերի 1-ից	

Դպրոցի խորհուրդը 2017-2018 ուստարում իրականացրել է ՀՀ օրենսդրությամբ, դպրոցի կանոնադրությամբ սահմանված կոլեգիալ կառավարումը. գումարել է նիստեր, քննարկել և հավանության է արժանացրել 2017-2018 ուստարվա հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները, լսել և հավանության է արժանացրել դպրոցի ներքին գնահատման արդյունքները, տարեկան և եռամսյա հաշվետվությունները, քննարկել և հավանություն է տվել 2018թ. բյուջեի նախագծին, հիմնադրի սահմանած կարգով սահմանել է դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները և համամասնությունները, քննարկել և հավանություն է տվել շահույթի բաշխման նախագծին և այլն:

Մաս 2

Ուսումնական հաստատության սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը

Դպրոցի գործունեության լիարժեք գնահատման գործընթացը ներառում է ուսումնական միջավայրի անվտանգության գնահատումը, որը վերաբերում է ոչ միայն սովորողների անվտանգ և առողջ կենսագործունեությանը, այլև ուսուցիչների, վարչական ու սպասարկող անձնակազմի աշխատանքի, կյանքի և առողջության համար անվտանգ պայմաններ ապահովելուն:

- Դպրոցի խնդիրն է՝ ապահովել ուսումնական գործընթացի իրականացումը և սովորողների հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական լիարժեք բարեկեցությունը ու համակողմանի զարգացումը: Դպրոցի գործունեության ներքին գնահատման հաշվետվության 2-րդ մասի պատրաստման համար իրականացվել են դիտարկում-փաստագրումներ, որոնց միջոցով դիտարկվել են դպրոցում սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեության և առողջության պահպանման գնահատման չափանիշներն ու ցուցանիշները, վեր հանվել տարածքի, շենքի ու շինության, գույքի անվտանգ շահագործման, սովորողների ու աշխատակիցների անվտանգ կենսագործունեության ապահովման և առողջության պահպանման հետ կապված վիճակը և առկա խնդիրները:

1.1. ՀՀ ԿԳՆ «Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը

- Դպրոցի տարածքը պարսպապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:
- Դպրոցն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից:
Դպրոցը գտնվում է բանուկ ավտոճանապարհի մոտ, վերգետնյա կամ ստորգետնյա անցումներ չկան:
- Դպրոցի տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավորապես հավաքվում են հատուկ աղբարկղերում և դուրս են բերվում հաստատության տարածքից:
- Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները անարգել կարող են մոտենալ դպրոցի շենքին:
- Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար միջոցառումներ են իրականացվում կրծողների և վտանգավոր միջատների դեմ:

1.2. Դպրոցում պահպանվում են սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպվել են համապատասխան ծառայություններ

Դպրոցն ունի 3 մասնաշենք (ինչպես նաև առանձին շինություն կաթսայատան համար), որոնցից նորոգված է միայն հիմնական մասնաշենքը, որի վերանորոգումը նույնպես ավարտուն չէ (նորոգված չէ 4-րդ հարկի մեկ հարկաբաժինը): Հիմնանորոգման կարիք ունի մարզադահլիճի մասնաշենքը և 2-րդ մասնաշենքը, որտեղ այլևս անհնար է ուսումնական գործընթաց կազմակերպել, ինչի հետևանքով դպրոցի սովորողների ուսուցումը կազմակերպվում է մեկ մասնաշենքում, որի ընդհանուր մակերեսը կազմում է 2935 քառ. մ, որը թեև ըստ նորմատիվի բավարար է մեկ սովորողի համար սահմանված մակերեսի հաշվարկով, սակայն ստիպված ենք որպես դասասենյակ օգտագործել աշակերտական խորհրդի աշխատասենյակը, համակարգչային կաբինետները, լաբորատորիաները, ինչը խոչընդոտում է սովորողների ուսուցման, դաստիարակման, ինքնավարության զարգացման գործընթացների որակյալ իրականացմանը:

Ինչպես նշվեց, քանի որ դպրոցի 2-րդ մասնաշենքը ունի հիմնանորոգման կարիք (հնամաշ պատուհանների թույլ փեղկեր, տանիքի անկայուն ծածկ, մասնաշենքը կայուն չէ որոշ վտանգների նկատմամբ, օրինակ՝ ուժեղ քամիների, հորդառատ անձրևների...), 2-րդ մասնաշենքում երկրորդ հիմնական պահուստային ելքը փակ է և չի գործում, անվտանգության նորմերը չխախտելու նպատակով ուսուցումը կազմակերպվում է հիմնական մասնաշենքում:

Անմխիթար վիճակում է դպրոցի մարզադահլիճը, թեպետ նորոգվել է 2008 թվականին: Խնդիրն այն է, որ շենքի պատերն անընդհատ խոնավանում են տեղումների ժամանակ: Բացի այդ,

հանդերձարաններից մեկը չունի արտաքին լուսավորություն և օդափոխման հնարավորություն: Չկան ցնցուղարաններ, լվացարաններ և սանհանգույցներ (Ֆիզկուլտուրայի դասաժամերին սովորողներն օգտվում են հիմնական մասնաշենքի 1-ին հարկի սանհանգույցից):

Դպրոցի հիմնական մասնաշենքում առկա են պահուստային 4 ելքեր՝ դեպի դուրս բացվող:

Դպրոցն ապահովված է կապի, արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով:

Դպրոցն ունի հեռախոսագիծ և դասամիջոցների ազդարարման համակարգ (զանգ): Դրանք գործում են անխափան. էլեկտրաէներգիայի խափանման դեպքում օգտագործվում է ձեռքի մետաղյա զանգ:

Դպրոցի շենքը չունի կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող սովորողների ազատ տեղաշարժի ապահովող պայմաններ (թեք հարթակներ, լայն դռներ):

Դպրոցն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, սակայն անհրաժեշտ է վերականգնել խորհրդային շրջանից չգործող հրշեջ ծորակների համակարգը. տանիքը պատված է հրակայուն նյութերով:

Դպրոցում ոչ կառուցվածքային վտանգներ չկան. համակարգչային սարքավորումները, հեռուստացույցները ամրացված են աշխատատեղերին, անիվներով տեղաշարժվող ծանր իրերը ամրացված են հատակին:

Դպրոցի կահույքի բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը

Դպրոցի միջանցքների հատակները սայթաքուն չեն, ուղեգործով ծածկված տարածքներ չկան:

Դպրոցի ստորին հարկերի պատուհանները ունեն մետաղյա վանդակաճաղեր, սակայն շարժական չեն:

Դպրոցի կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է:

Դպրոցում մշակված է և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան: Դպրոցի նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցալաքներով: Դրանց մասին բոլոր սովորողները տեղեկացված են և փորձնական տարհանումների միջոցով գիտեն/սովորում են օգտվել դրանցից: Դպրոցի տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:

2.3. Դպրոցի նախագծային հզորությունը նկարագրող ցուցանիշներ և չափանիշներ

Դպրոցը պահպանում է իր նախագծային հզորությունը՝ համաձայն 2007 թ. հունիսի 4-ին տրված № 718 և № 719 լիցենզիաներով և համապատասխան հավելվածներով սահմանված թվի: Սակայն 2017 թ. սեպտեմբերից դպրոցն իրականացնում է միայն 3-րդ աստիճանի հանրակրթական ծրագիր, և անհրաժեշտություն է առաջացել № 719 լիցենզիայի հավելվածում փոխել ավագ դպրոցում սովորողների սահմանային թիվը՝ նախկինին ավելացնելով հիմնական դպրոցում սովորողների սահմանային թիվը: Այդ նպատակով հայտ է ներկայացվել ՀՀ ԿԳ նախարարության լիցենզավորման վարչություն: ՀՀ ԿԳ նախարարի 2018թ. հուլիսի 26-ի № 797-Ա-2 հրամանով կատարվել է փոփոխություն, և դպրոցի միջնակարգ հանրակրթական ծրագրով համակազմի թիվը դարձել է 1050:

- Դպրոցի սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին: Ավագ դպրոցում դասարանում սովորողների առավելագույն թիվը սահմանված է 30 հոգի: Դասարաններում սովորողների փաստացի միջին թիվը 19-20 է: Ուսալանով և սանիտարական նորմերով սահմանված պահանջները կատարվում են:

- Դպրոցի դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին:

- Դպրոցի սովորողները «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացները անցկացնում են մարզադահլիճում: Դպրոցը ունի մեկ մարզադահլիճ և երկու հանդերձարան շենքի ներսում: Ունի բացօթյա մարզահրապարակ: Ցուրտ եղանակին որոշ դասաժամերի մարզադահլիճում դաս է անցկացնում երկու դասարան:

- Դասարաններում աշակերտական նստարանները դասավորված են կամ ավանդական երեք շարքով, կամ խառը: Հաճախ, ուսուցման ոչ դաս-դասարանային եղանակին բնորոշ մեթոդիկաների կիրառմամբ պայմանավորված, ուսումնական պարապմունքի ընթացքում աշակերտական սեղանները վերադասավորվում են փոփոխական կազմով գույգերով, չորս կամ վեց սովորողի համագործակցային աշխատանքը արդյունավետ կազմակերպելուն միտված հարմար ձևով

(շրջանաձև, T-աձև, Ս-աձև, խառը): Վերադասավորությունը մեծ ժամանակ չի խլում ուսումնական գործընթացից: Վերադասավորումները ուսուցիչը հիմնականում կազմակերպում է դասամիջոցին՝ ուսումնական պարապմունքից առաջ: Դասերը կազմակերպվում են նաև էլեկտրոնային միջոցների կիրառմամբ, երբ դասի ընթացքում սովորողներն ինքնուրույն աշխատանքի ժամանակ օգտագործում են համակարգիչներ: Այս դեպքում դասասենյակում նստարանները վերադասավորվում են կազմակերպվող աշխատանքի համապատասխան ձևով:

Աղյուսակ 8. Տվյալներ դասասենյակներում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, T-աձև, Ս-աձև, խառը)	Սեղան-նստարանների թիվը	Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները
Դասասենյակ N 107-108	80.1	T-աձև	20/30	1.25
Դասասենյակ N 201	49.2	շարքերով	23/23	0,88
Դասասենյակ N 202	48,6	խառը	12/24	0,88
Դասասենյակ N 203	49.0	խառը	12/24	0,88
Դասասենյակ N 204	49,2	խառը	15/30	0,96
Դասասենյակ N 205	48,6	խառը	14/28	0,96
Դասասենյակ N 206	49,0	խառը	16/32	0,85
Դասասենյակ N 207-208	80.5	Ս-աձև	20/23	1,25
Դասասենյակ N 301	49,0	շարքերով	6/12	0,90
Դասասենյակ N 302	48,6	խառը	15/30	0,85
Դասասենյակ N 303	49,2	խառը	15/30	0,90
Դասասենյակ N 304	49,0	խառը	12/24	0,88
Դասասենյակ N 305	48,6	խառը	15/30	0,89
Դասասենյակ N 310	49,5	խառը	14/28	0,90
Դասասենյակ N 401	54.0	խառը	15/30	0,93
Դասասենյակ N 402	49,5	խառը	12/24	0,90
Դասասենյակ N 403	49,8	խառը	12/24	1,27
Դասասենյակ N 404	50.4	խառը	15/30	0,90
Դասասենյակ N 409-410	101.3	T-աձև	20/40	1.25

Աղյուսակ 9. Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակում մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Մեկ սովորողին ընկնող մակերեսը (քմ)	Նորմերից պակաս կամ ավել մակերեսը (քմ)
Դասասենյակ N107-108	80.1	2.67	Ավել է 0.67
Դասասենյակ N 201	49.2	2,13	ավել է 0.13
Դասասենյակ N 202	48,6	2.03	ավել է 0.03
Դասասենյակ N 203	49.0	2.88	ավել է 0,88
Դասասենյակ N 204	49,2	2.04	ավել է 0,04
Դասասենյակ N 205	48,6	1.74	պակաս է 0,26
Դասասենյակ N 206	49,0	1.53	պակաս է 0.47
Դասասենյակ N 301	80.5	4.08	ավել է 2.08
Դասասենյակ N 302	49,0	1.63	պակաս է 0.36
Դասասենյակ N 303	48,6	1.6	պակաս է 0,4
Դասասենյակ N 304/	49,2	2.05	ավել է 0.5
Դասասենյակ N 305	48,6	1.62	Պակաս է 0.38
Դասասենյակ N 310	49,5	1.65	ավել է 0.32
Դասասենյակ N 401	54.0	1.8	պակաս է 0.2
Դասասենյակ N 402	49,5	2.5	ավել է 0,5
Դասասենյակ N 403	49,8	2,07	ավել է 0,07
Դասասենյակ N 404	50.4	1.7	պակաս է 0,3
Դասասենյակ N409-410	101.3	2.5	ավել է 0,5

2.4 Ուսումնական հաստատության անձնակազմի և սովորողների անվտանգ կենսագործունեությունը նկարագրող չափանիշներ

Դպրոցն իրականացնում է նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների շրջանում անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների ու հմտությունների ձևավորմանը

- Դպրոցի անձնակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին: Աշխատակազմը և սովորողները տեղեկացված են հակահրդեհային անվտանգության կանոններին, երկրաշարժի ժամանակ պաշտպանվելու ձևերին, քիմիական վարակ ազդանշանների կանոններին:
- Դպրոցի անձնակազմը և սովորողները տեղեկացված են դպրոցում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) գտնվելու տեղերի վերաբերյալ ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին: Անվտանգության որոշ միջոցներ չեն գործում (օրինակ՝ հրշեջ-ծորակներ): Դպրոցի յուրաքանչյուր հարկում առկա են կրակմարիչներ:
- Դպրոցում իրականացվում են տեղական վտանգների գնահատման և աղետների պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ:
- Դպրոցում առկա է ԱՌՆ-ի և ԱԻ-ում գործելու պլան, քաղաքացիական պաշտպանության պլան, որոնք գործարկվում են ուսումնական տարվա ընթացքում, իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան:
- Դպրոցն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով:
- Դպրոցի բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:
- Դպրոցի միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:
- Դպրոցն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով:
- Դպրոցի սանհանգույցները հիմնական մասնաշենքում վերանորոգված են, յուրաքանչյուր հարկում տեղակայված են աղջիկների և տղաների սանիտարական հանգույցներ, բացառությամբ 4-րդ հարկից, որտեղ գտնվում է հանդիսությունների դահլիճը և փոքրաթիվ դասասենյակներ: Դպրոցի հիմնական մասնաշենքը ունի վեց սանհանգույց: 2-րդ մասնաշենքի առաջին հարկում գործում է արվեստի դպրոց, մասնաշենքն ունի երեք սանհանգույց, որոնք ունեն հիմնանորոգման կարիք: 3-րդ մասնաշենքը (մարզադահլիճը) սանհանգույց չունի:
- Դպրոցի բոլոր սանհանգույցները ապահովված են հոսող ջրով, ապահովված են հիգիենայի պարագաներով (օձառ, թուղթ և այլն):
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար ուսումնական հաստատությունում չկա հարմարեցված սանհանգույց:
- Դպրոցում առկա է սննդի կետ: Սննդի կետի տեսակը՝ բուֆետ: Վերանորոգված է: Բուֆետն ապահովված է 2 լվացարանով և լվացվելու պարագաներով:
- Դպրոցում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն:

Չափանիշներ 1 և 2

Աղյուսակ 10. Տվյալներ արտակարգ իրավիճակներում հաստատության անձնակազմի և սովորողների տեղեկացված լինելու մասին

Դիտարկման ամսաթիվ՝ 14.03.2018

N	Չափանիշը	Կատարել նշում համապատասխան փաստաթղթի և գույքի առկայության մասին (գրել փաստաթղթի անվանումը և ընդունման ամսաթիվը, թվարկել առկա գույքը) Արձանագրել իրավիճակը
1.	Դպրոցի աշխատակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին	Տարհանման սխեմա. հաստատված է 16.03.2017: Առկա են՝ պատգարակներ, ռադիացիայի չափման սարք:
2.	Դպրոցի աշխատակազմը և սովորողները տեղեկացված են դպրոցում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակի, հրշեջ տեղեկատուի, հրշեջ ծորակի և այլն) տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին	Առկա են՝ կրակմարիչներ, հակահրդեհային ստենդ, հեռախոսակապ: Դպրոցի աշխատակազմը և սովորողները տեղեկացված են հրշեջ ծորակի տեղի մասին, սակայն տեսականորեն են տեղեկացված դրա օգտագործման կանոններին, քանի որ դպրոցի հրշեջ ծորակները չեն գործում:

Հարցման արդյունքում դպրոցի աշխատակազմի և սովորողների մոտ 73% -ը տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու կանոններին, իսկ 36% տիրապետում են մասամբ:

Աղյուսակ 11. Տվյալներ տեղական վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության ու հակազդման մեխանիզմների ուղղությամբ հաստատությունում իրականացվող միջոցառումների վերաբերյալ

Ամսաթիվը	Դասարանը	Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված ուսումնական նյութերը և պարագաները	Մասնակից սովորողների և աշխատակիցների թիվը
09.10.2017թ.	X-XII	Երկրաշարժի ժամանակ պաշտպանության միջոցները:	230
09.01.2018թ.	XI	Հակաճառագայթային պատսպարման ձևերից օգտվելու վարքականոնները:	100
18.01.2018թ.	X	«Օդային տագնապ», «Ճառագայթային վարակ» և «Քիմիական վարակ» ազդանշանային համակարգի իրականացումը ձեռքի տակ եղած միջոցներով:	95
23.01.2018թ.	X-XII	Հրդեհի տեղայնացման և մարման ձևերը: Կրակմարիչների օգտագործման ձևերը: Հակաճառագայթային պատսպարման ձևերից օգտվելու վարքականոնները: Երկրաշարժի ժամանակ պաշտպանության միջոցները:	220
06.02.2018թ.	X	«Քիմիական տագնապ» ազդանշանային համակարգի կիրառումը և պաշտպանության ձևերը:	100
19.04.2018թ.	X-XII	Կենցաղային թունավորումների ժամանակ անհետաձգելի միջոցառումներ:	200

Աղյուսակ 12. Տվյալներ ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության պլանից բխող սովորողների և աշխատակազմի հետ տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների և վարժանքների վերաբերյալ

Ամսաթիվը	Դասարանը	Միջոցառման/վարժանքի անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը	Մասնակից սովորողների և աշխատակիցների թիվը
08.09.2017թ.	ուսուցիչներ անձնակազմ	Դասախոսություն թեման՝ «Մեյսնապաշտպանության վարքականոնների ուսուցում»	40
09.10. 2017թ.	Դպրոցի ՔՊ-ի կազմավորումներ	«ՔՊ կազմավորումների գործողությունները երկրաշարժի ժամանակ» թեմայով հատուկ ուսումնավարժություն	16
11.10.2017թ.	X-XII անձնակազմ	Ուսումնական տազնապ, տարհանման վարժանք երկրաշարժի դեպքում	270
02.03.2018թ.	X-XII անձնակազմ	ՔՊ միջազգային օրվան նվիրված դասախոսություն՝ «Տարհանման կազմակերպումը դպրոցում»	240
15.03.2018թ.	X-XII անձնակազմ	Ուսումնական տազնապ, տարհանման վարժանք ահաբեկչության դեպքում	280
2017-2018 ուստարի	ուսուցիչներ	Պարապմունքներ ուսուցիչների հետ ՔՊ վերաբերյալ:	28

10-րդ (3 ժամ), 11-րդ (5 ժամ) դասարաններում ՆԶՊ -ի դասաժամերին ուսումնասիրվել են «Անվտանգ կենսագործունեության» թեմաները:

Ստեղծվել են ՔՊ-ի և ԱԻ-ի համապատասխան կազմավորումներ: Յուրաքանչյուր կազմավորման (կապի, հակահրդեհային, փրկարարական, հասարակական կարգի պահպանման, բժշկական) հետ տարվել է բացատրական աշխատանք: Ստեղծվել է ՀՀ Երևանի Աջափնյակ համայնքի ՀՀ ԿԳՆ «Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ԱՌՆ և ԱԻ-ում գործելու պլան:

Հարցման արդյունքում դպրոցի աշխատակազմի և սովորողների մոտ 73 % -ը տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու կանոններին:

Աղյուսակ 13. Տվյալներ դպրոցի շենքի ջեռուցման պայմանների մասին

Դիտարկման ամսաթիվ 13.02.2018

Դպրոցն ապահովված է լուկալ ջեռուցման անվտանգ համակարգով				
Այլ	Ոչ (նկարագրել թե ինչպես է ջեռուցվում դպրոցի շենքը)			
Դասասենյակները, դահլիճները, այլ սենյակները, միջանցքները և այլն	Ջեռուցման ձևը, (վառելիքի տեսակը)	Ջերմաստիճանը շրջայցի պահին	Ջեռուցման ժամերը	
Սենյակ N101 /տնօրենի աշխատ./	Գազ	21°	7.00 -15.00	
Սենյակ N105 /արհեստանոց/	Գազ	20°	7.00 -15.00	
Սենյակ N106 /օժ. սենյակ/	Գազ	20°	7.00 -15.00	
ՍենյակN107,108/քիմիաի լաբ./	Գազ	20°	7.00 -15.00	
Դասասենյակ N201	Գազ	20,5°	7.00 -15.00	
Դասասենյակ N202	Գազ	20,5°	7.00 -15.00	
Դասասենյակ N203	Գազ	20,5°	7.00 -15.00	
Դասասենյակ N204	Գազ	21°	7.00 -15.00	
Դասասենյակ N205	Գազ	21°	7.00 -15.00	
Դասասենյակ N206	Գազ	21°	7.00 -15.00	
ԴասասենյակN207,208/ֆիզ.լաբ./	Գազ	18,6°	7.00 -15.00	

Դասասենյակ N209	Գազ	18°	7.00 -15.00
Դասասենյակ N210	Գազ	18°	7.00 -15.00
Դասասենյակ N301	Գազ	19°	7.00 -15.00
Դասասենյակ N302	Գազ	21°	7.00 -15.00
Դասասենյակ N303	Գազ	20.5°	7.00 -15.00
Դասասենյակ N304	Գազ	20.5°	7.00 -15.00
Դասասենյակ N305	Գազ	21°	7.00 -15.00
Դասասենյակ N307, 308	Գազ	18°	7.00 -15.00
Դասասենյակ N309	Գազ	18°	7.00 -15.00
Դասասենյակ N401	Գազ	18°	7.00 -15.00
Դասասենյակ N402	Գազ	18,5°	7.00 -15.00
Դասասենյակ N403	Գազ	18,5°	7.00 -15.00
Դասասենյակ N404	Գազ	18,5°	7.00 -15.00
Դասասենյակ N405	Գազ	18°	7.00 -15.00
Դասասենյակ N406	Գազ	18°	7.00 -15.00
Դասասենյակ N407	Գազ	18.2°	7.00 -15.00
Դասասենյակ N409,410/կենս. լաբ. /	Գազ	18°	7.00 -15.00
Մարզադահլիճ	Գազ	19°	7.00 -15.00
Բուժկետ /102/	Գազ	21°	7.00 -15.00
Գրադարան /103/	Գազ	19°	7.00 -15.00
Բուֆետ /104/	Գազ	20 °	7.00 -15.00
Սանհանգույցներ 100, 200, 300	Գազ	18°	7.00 -15.00
Ուսուցչանոց /306/	Գազ	19.5 °	7.00 -15.00
Հանդիսությունների դահլիճ /408/	Գազ	17,3°	7.00 -15.00
1-ին հարկի միջանցք	Գազ	18°	7.00 -15.00
2-րդ հարկի միջանցք	Գազ	18,7°	7.00 -15.00
3-րդ հարկի միջանցք	Գազ	18,7°	7.00 -15.00
4-րդ հարկի միջանցք	Գազ	18°	7.00 -15.00

Աղյուսակ 14. Տվյալներ դպրոցի ջրամատակարարման, սանհանգույցների (կոյուղացման) առկայության և դրանց վիճակի վերաբերյալ

Հաստատության ջրամատակարարումը (լրացնել համապատասխան սյունակը)						
Ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով (ընդգծել այն կամ ոչ բառերը)		Ապահովված է հոսող խմելու ջրով, բայց ոչ շուրջօրյա		Ապահովված չէ հոսող խմելու ջրով		
<u>այո</u>		Օրեկան քանի՞ ժամ է ջրամատակարարումը		(նկարագրել խնդիրը)		
ոչ				(պարզաբանել ինչպե՞ս է լուծվում ջրամատակարարման հարցը)		
Հաստատության սանհանգույցները և դրանց վիճակը						
Շենքի հարկ	Սանհանգույցների թիվը	Աղջիկների սանհանգույցի առկայությունը	Տղաների սանհանգույցի առկայությունը	Հիգիենայի պարագաների առկայությունը	Հարմարեցվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին	Վերանորոգված են, թե ոչ
1-ին մասնաշենք						
1-ին հարկ	2	Այո	Այո	Այո	Ոչ	Այո
2-րդ հարկ	2	Այո	Այո	Այո	Ոչ	Այո
3-րդ հարկ	2	Այո	Այո	Այո	Ոչ	Այո
4-րդ հարկ	0	Ոչ	Ոչ			

2-րդ մասնաշենք						
2-րդ հարկ	2	Այո	Այո	Ոչ	Ոչ	Ոչ
3-րդ հարկ	1	Այո	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ
3-րդ մասնաշենք /մարզադահլիճ/	0	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ

Աղյուսակ 15. Տվյալներ ուսումնական հաստատությունում սննդի կետի առկայության և սննդի կազմակերպման վերաբերյալ

Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կետ, թե ոչ					
Այո					
Ուսումնական հաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ, թե ոչ					
Այո					
Նկարագրել սննդի կետի սանիտարական վիճակը՝ ըստ հակահամաճարակային ծառայության					
Սննդի կետի տեսակը	Միաժամանակ սնվելու հնարավորություն ունեցող անձնաց թիվը և տարածքը (քմ)	Սառը և տաք հոսող ջրի առկայությունը	Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը	Տաք սննդի հնարավորությունը	Վերանորոգված է, թե ոչ
բուժետ	48,7քմ / 25 անձ	Այո	Այո	Ոչ	Այո

Աղյուսակ 16. Տվյալներ ուսումնական հաստատությունում բուժկետի առկայության և բուժսպասարկման վիճակի վերաբերյալ

Ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ					
Այո					
Ուսումնական հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրել առաջին բուժօգնություն (ընդգծել այո կամ ոչ բառերը)					
Այո					
Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը (քմ)	Բուժաշխատողների թիվը և նրանց պաշտոնները	Բուժկետում առկա գույքը	Բուժկետը վերանորոգված է, թե ոչ	Սանիտարական վիճակը	Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը
I հարկ 14,9	1 բուժքույր	Գրասեղան, աթոռներ, հասակաափ, կշեռք, բազմոց, բժշկական գործիքների սեղան, դեղերի պահարան	Այո	բավարար	Բուժկետն ապահովված է դեղորայքով, բուժօգտագործման միջոցներով

2.5. Սոցիալական առողջության չափանիշներ

Դպրոցն իրականացնում է սովորողների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ:

- Դպրոցում իրականացվում են ծրագրեր՝ ակոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելու համար:
- Դպրոցում իրականացվում են մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերի կանխման կամ դրանց բացահայտման աշխատանքներ:
- Դպրոցում գործում են սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմներ:
- Դպրոցն իրականացնում է երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման միջոցառումներ:
- Դպրոցում կազմակերպվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումներ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով:
- Դպրոցն ստեղծում է ուսումնամեթոդական նյութեր և կազմակերպում է միջոցառումներ՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ:

Աղյուսակ 17. Տվյալներ ուսումնական հաստատության սովորողների ֆիզիկական, հոգևոր և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքների վերաբերյալ

Հաստատությունում գրանցված ակոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը տվյալ ուստարում			
Դեպքը	Ամսաթիվը	Դասարանը, սովորողը(ները)	Ձեռնարկված միջոցառումը
1. Դպրոցում երբեմն գրանցվել են ծխախոտի օգտագործման դեպքեր	Ուստարվա ընթացքում	10-12	Ա.Տարվել են դեպքերի բացահայտման և կանխարգելման աշխատանքներ Բ.Իրականացվել են բացատրական աշխատանքներ գրույցների, սեմինարների ձևով:
2. Ակոհոլի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքեր դպրոցում չեն գրանցվել, սակայն ձեռնարկվել են կանխարգելիչ միջոցառումներ	Ուստարվա ընթացքում	10-12	Իրականացվել են կանխարգելիչ գրույցներ «Վնասակար սովորույթների ազդեցությունը անհատի ձևավորման վրա» /խմիչք, ծխախոտ, թմրանյութեր/, «Առողջության գրավականը», «Առողջությունը կյանքի աղբյուր», «Վտանգներ. թմրամոլություն և վարակներ» թեմաներով: Կազմակերպվել է «Վնասակար սովորույթներ» թեմայով տեսանյութերի դիտում, պատրաստվել են ցուցապաստառներ:
Ակոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումն կանխարգելելու ուղղությամբ իրականացված ուսումնական ծրագրերը և միջոցառումները			
Ծրագիրը կամ միջոցառումը (նշել թեման)	Ամսաթիվը	Դասարանը	

1.Տարվել է աշխատանք թիրախային խմբի բացահայտման և դեպքերի կանխարգելման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	10-12
2.Դաստեղծված ժամերին հոգեֆիզիկական դաստ. շրջանակում իրականացվել են գրույցներ «Վնասակար սովորությունների ազդեցությունը անհատի ձևավորման վրա» /խմիչք, ծխախոտ, թմրանյութեր/, «Առողջության գրավականը», «Առողջությունը կյանքի աղբյուր», «Վտանգներ. թմրամոլություն և վարակներ»թեմաներով : Կազմակերպվել են համապատասխան թեմայով տեսանյութերի դիտում:	23.10.17թ.-27.11.17թ. 20.11.17թ.-24.11.17թ 20.11.17թ.-24.11.17թ 09.04.18թ.-13.04.18թ.	10-12
3.Կազմակերպվել է հանդիպում ծնողների հետ, քննարկվել են դպրոցում գրանցված ծխախոտի օգտագործման դեպքերի դեմ կանխարգելման բոլոր հնարավոր միջոցները: 4. Դպրոցի բուժաշխատողի մասնակցությամբ կազմակերպվել է գրույց ավագ դասարանների սովորողների հետ «Թմրանյութերի և այլ վնասակար նյութերի ազդեցությունը օրգանիզմի վրա» թեմայով:	27.10.2017թ. Նոյեմբեր 2017թ.	10
5. Աշխտրիդի անդամները «Վնասակար սովորություններ» թեմայով պատրաստել են բուկլետներ և բաժանվել սովորողներին: 6.Քիմիայի ուսուցչի կողմից կազմակերպվել է բաց դաս «Քիմիան օրգանիզմում» և «Սպիրտի դատավարությունը» թեմաներով:	01.12.17թ.-15.12.17թ. 18.12.17թ.	10-12 11-12
7. Դպրոցի հետ համագործակցող ոստիկանական տեսուչի կողմից թիրախային խմբի հետ պարբերաբար տարվել է անհատական աշխատանք: 8.Վնասակար սովորությունների դեմ պայքարի միջոցառումների շրջանակում Ոստիկանության Մաշտոցի բաժնի ԱԳ բաժանմունքի դպրոցական ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Վ. Հակոբյանը անցկացրել է գրույց «Վնասակար սովորությունների ազդեցությունը անհատի ձևավորման վրա» թեմայով : 9.10-րդ դասարանների տղաների հետ Ոստիկանության Մաշտոցի բաժնի ԱԳ բաժանմունքի դպրոցական ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Վ. Հակոբյանը անցկացրեց գրույց «Վնասակար սովորություններ» թեմայի շուրջ:	Ուստարվա ընթացքում 05.12.17թ. 30.01.18թ.	9-12 10 10
10. «Վնասակար սովորություններ» թեմայով սովորողների կողմից պատրաստեցին ցուցապաստառներ: Դպրոցում գրանցված մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերը, դրանց բացահայտմանն ու կանխարգելմանն ուղղված քայլերը	08.01.18թ-09.02.18թ.	10-րդ դասարաններ

Դեպքը	Ամսաթիվը	Դասաբանը	Բացահայտմանն ու կանխմանն ուղղված քայլերը
<p>11-րդ դասարանի 2 սովորողների միջև թյուրըմբռնման արդյուքում ծագել է վիճաբանություն, որի ժամանակ նրանցից մեկը դանակահարել է մյուսին: Տուժածին դպրոցում տրվել է առաջին բուժօգնություն, որից հետո շտապօգնության մեքենայով տեղափոխվել է հիվանդանոց:</p> <p>Դպրոցում սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմները</p>	12.09.2017	11	<p>Դեպքի առթիվ Ոստիկանության Մաշտոցի բաժնում հարուցվել է քրեական գործ: Գործի վարույթը դատարանում դեռևս ընթացքի մեջ է:</p> <p>Սովորողների հետ տարվել է բացատրական աշխատանք դեպքերի կանխարգելման նպատակով, կազմակերպվել են քննարկումներ: Դպրոցական ավագ տեսուչ ոստիկանության ավագ լեյտենանտ Վ. Հակոբյանը դպրոցի սովորողների հետ անցկացրել է գրույց «Անչափահասների կողմից մարմնական վնասվածքներ պատճառելու, սատր զենք պահելու, այդ հանցատեսակները կատարելու համար օրենքով նախատեսված խնդիրների մասին»:</p>
<p>Դեպքը</p> <p>Չեն գրանցվել</p> <p>Չեն գրանցվել, սակայն իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ</p>	Ամսաթիվ	Դասարանը, սովորողը(ները)	<p>Բացահայտման, քննարկման մեխանիզմը, ձեռնարկված քայլերը և կանխարգելման ուղիները</p>
<p>Երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխային զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումները և մեխանիզմները դպրոցում Միջոցառում</p>	Ամսաթիվ	Մասնակիցները, դրանց թիվը	Առաջադրված մեխանիզմ
<p>1.Ծնողները իրազեկվել են իրենց իրավունքների և պարտականությունների մասին</p>	Ուստարվա սկիզբ	110 ծնող	Կազմակերպվել են սեմինարներ ա.«Երեխայի իրավունքների մասին», բ.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքների իրազեկման նպատակով
<p>2.Կազմակերպվել են ծնողական խորհրդի հանդիպումներ</p>	Սեպտեմբեր 2016 Մայիս 2017	Ծնողական խորհրդի 12 անդամ	Զրույց-քննարկումներ
<p>3. Ծնողական ժողովների անցկացում. ծնող-ուսուցիչ-սովորող հարաբերությունների քննարկում</p>	Ուստարվա ընթացքում	250 ծնող	Կազմակերպվել են գրույցներ, բացահայտվել և քննարկվել են խնդիրները, առաջարկվել են լուծումներ
<p>4.«Թրաֆիքինգ» թեմայի շրջանակներում դասաղեկների կողմից կազմակերպվել են գրույց-քննարկումներ</p>	19. 03.18թ-23.03.18թ .	Սովորողներ՝ 250	Բացահայտել ի՞նչ է թրաֆիքինգը, և ովքե՞ր կարող են դառնալ թրաֆիքինգի զոհ
<p>Դպրոցում կազմակերպված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումները՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով</p>			

Դասընթացի անվանումը, միջոցառման թեման, օգտագործված ուսումնամեթոդական նյութերը	Ամսաթիվ	Դասարանը(ները)	Մասնակիցների թիվը
Դասղեկի ժամերին իրականացվել է զրույց 1. «Առողջության գրավականը», 2.«Առողջությունը կյանքի աղբյուր» 3.«Մեռավարականներ, ի՞նչ է ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը», 4.«ՄԻԱՎ-ի, ՁԻԱՀ-ի կանխարգելիչ միջոցները»	20. 11. 17թ.-24. 11. 17թ. 27.11.17թ.-01.12.17թ.	10-12	250
2.Իրականացվել է առողջ ապրելակերպի դասեր:	Փետրվար 2017թ	10-11	210
3.ՄԻԱՎ-ի և հեպատիտ B-ի ու C-ի նկատմամբ հետազոտության եվրոպական շաբաթվա շրջանակներում սովորողների իրազեկությունը վերոնշյալի վերաբերյալ բարձրացնելու նպատակով աշխտրհրդի նախաձեռնությամբ դպրոցի բուժաշխատողի հետ միասին սովորողների հետ կազմակերպվել է «ՄԻԱՎ, ՁԻԱՀ-ի կանխարգելման ուղիները» թեմայով զրույց: 4.Աշխտրհրդի նախաձեռնությամբ «Ի՞նչ է ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը» թեմայով պատրաստվել են բուկլետներ, տեղեկատվական թերթիկներ և բաժանվել են սովորողներին:	01.12.2017թ. 01.12-15.12	ԱԽ 10-12	20 250
Դպրոցում ստեղծված ուսումնամեթոդական նյութերը և կազմակերպած միջոցառումները՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ			
Դասընթացի անվանումը, միջոցառման թեման, օգտագործված ուսումնամեթոդական նյութերը	Ամսաթիվ	Դասարանը(ները)	Մասնակիցների թիվը
1.Սովորողները ծանոթացել են դպրոցի ներքին կարգապահական կանոններին իրենց իրավունքներին և պարտականություններին:	Ուստարվա սկիզբ	10-12	250 սովորող 12 դասղեկ հասարակ ագիտու թյան ուսուցիչ
2.Դասղեկի ժամերին բարոյաիրավական, մարդասիրական դաստիարակության շրջանակում անցկացրած զրույցներ, քննարկումներ 1.«Ուժի չարաշահում», «Բռնությունը չարիք է» 2.«Վարվելակերպի գեղագիտությունը» 3.«Բարություն, մարդասիրություն, գթասրտություն» 4.«Ընկերասիրություն, հանդուրժողականություն, համբերատարություն» 5.«Ամենամեծ առաքինությունն ու մոլորությունը. խոնարհություն, հպարտություն թեմաներով: «Հանդուրժողականության ուսուցում»	սեպտեմբեր 2017թ հոկտեմբեր 2017թ. նոյեմբեր 2017թ. հունվար 2018թ. ապրիլ 2018թ.	10-12	250 սովորող 12 դասղեկ

<p>դասղեկի ձեռնարկ, «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում» դասղեկի ձեռնարկ «Խրատի թանգարան»</p> <p>3. Դպրոցական ավագ տեսուչ ուստիկանության ավագ լեյտենանտ Վ. Հակոբյանը դպրոցի սովորողների հետ անցկացրեց զրույց-զեկուցում «Անչափահասների կողմից մարմնական վնասվածքներ պատճառելու, սառը զենք պահելու, այդ հանցատեսակները կատարելու համար օրենքով նախատեսված խնդիրների մասին»</p>	<p>Հոկտեմբեր 2017թ.</p>	<p>10</p>	<p>23 սովորող</p>
<p>4. Ոստիկանության Մաշտոցի բաժնի ավագ տեսուչ Արմեն Մարգարյանը սովորողների հետ անցկացրեց զրույց-զեկուցում «Անչափահասը և հանցագործությունը» թեմայով:</p>	<p>16.03.18թ.</p>	<p>10</p>	<p>22</p>

Մաս 3

Դպրոցի գործունեության արդյունավետությունը

Ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման կարևորագույն մասը ուսումնական հաստատության գործունեության արդյունավետության գնահատումն է: Կրթության որակը ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքն է, որը ներառում է.

- սովորողներին, ովքեր առողջ են, պատրաստ սովորելու և մասնակցելու ուսումնառության գործընթացին՝ ստանալով իրենց ընտանիքների լիակատար աջակցությունը.
- ուսումնական միջավայրը, որը բարեկարգ է ու անվտանգ, ապահովում է առողջության պահպանումը, ինչպես նաև հագեցած է անհրաժեշտ ուսումնական գույքով և ռեսուրսներով.
- կրթության բովանդակությունը, որը սահմանված է կրթության չափորոշիչներով, առարկայական ծրագրերով, ուսումնական պլաններով ու արտացոլված ուսումնամեթոդական նյութերում և ուղղված է սովորողների մոտ հիմնարար գիտելիքների, կենսական հմտությունների և արժեքների ձևավորմանը, ներառյալ առողջության պահպանման, առողջ սնուցման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, գենդերային հավասարության և խաղաղության պահպանմանն ուղղված գիտելիքներն ու հմտությունները զարգացնելուն.
- որակյալ ուսուցչական կազմը, որն օգտագործում է աշակերտակենտրոն ուսուցման մեթոդներ.
- հմուտ ղեկավարվող ուսումնական գործընթացը և արժանահավատ ու արդար գնահատման համակարգը, որը խթանում է սովորողների առաջադիմությունն ու նվազեցնում անհավասարությունները նրանց միջև.
- ուսուցման վերջնարդյունքները, որոնք ներառում են սովորողների գիտելիքները, հմտությունները, արժեքային համակարգն ու աշխարհայացքը և ուղղված են հասարակության մեջ սովորողների դրական մասնակցությանը»:

3.1 Դպրոցի սովորողների առաջադիմությունը նկարագրող ցուցանիշները

Դպրոցի սովորողների առաջադիմությունը նկարագրող ցուցանիշներից է սովորողների միջին տարեկան գնահատականները՝ ըստ կրթական աստիճանների: Այս ցուցանիշի հաշվարկի և դրան վերաբերող աղյուսակները լրացնելու համար կատարվել է դիտարկում-փաստագրում և դպրոցի վիճակագրական տվյալների վերլուծություն:

Աղյուսակ 18. Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2016-2017 ուսումնական տարում

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը		Տարեկան գնահատականների միջինը		9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը	
	9-րդ. դաս.	12-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ. դաս.
Հայոց լեզու	46	65	7,0	7,6	13,6	14,8
Մաթեմատիկա	46	65	7,2	7,1	13,9	15,0
Օտար լեզու	46	65	7,2	8,0	14,6	-
Հայոց պատմություն	46	65	7,1	7,8	13,6	14,5
Բնագիտություն	46	65	7,3	8,0	14,8	-
Ֆիզկուլտուրա	46	65	9	8,8	9,1	ստուգված
Գրականություն	46	65	7,3	-	14,1	-
Ընդամենը	46	65	7,4	7,5	13,4	14,8

Աղյուսակ 19. Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2017-2018 ուսումնական տարում

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը	Տարեկան գնահատականների միջինը	12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը
	12-րդ դաս.	12-րդ դաս.	12-րդ դաս.
Հայոց լեզու	40	7,6	14,0
Մաթեմատիկա	40	7,3	15,5
Հայոց պատմություն	40	7,7	15,0
Ֆիզկուլտուրա	40	9,0	ստուգված
Ընդամենը	40	7,9	14,8

Աղյուսակ 20. Տվյալներ 9-րդ և 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների արդյունքների փոփոխության դինամիկայի վերաբերյալ

2017-2018

Քննական առարկաներ	Քննությունների միջին միավորների փոփոխությունը նախորդ ուսումնական տարվա նկատմամբ՝ ըստ կրթական աստիճանների			
	Քննությունների միջին միավորների աճի տոկոսը		Քննությունների միջին միավորների նվազման տոկոսը	
	9-րդ դասարան	12-րդ դասարան	9-րդ դասարան	12-րդ դասարան
Հայոց լեզու	-		-	0,8/4%/
Մաթեմատիկա	-	0,5/2,5%/	-	
Օտար լեզու	-		-	
Հայոց պատմություն	-	0,5/ 2,5%	-	
Բնագիտություն	-		-	
Ֆիզկուլտուրա	-		-	
Ընդամենը	-	0,2/1%	-	

Դպրոցի սովորողների առաջադիմությունը նկարագրող ցուցանիշներից են.

- գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների,
- ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների,
- ավարտման գործակիցը՝ ըստ կրթական աստիճանների,
- երկտարեցիների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների,
- կրկնուսույցների մոտ պարապող սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների:
- միասնական քննություններին մասնակիցների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ,
- ավարտական և միասնական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ,
- հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը և տոկոսը,
- նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունված 12-րդ դասարանի շրջանավարտների թիվը և տոկոսը,
- հիմնական դպրոցը ավարտած սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ուսումը շարունակում են ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում,
- բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ,
- սովորողների բացակայությունների ընդհանուր թիվը ժամերով՝ ըստ կրթական աստիճանների,
- դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված սովորողների թիվը և տոկոսը,

ուսումնական տարվա ընթացքում տվյալ ուսումնական հաստատությունից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը և տոկոսը, այդ թվում՝ այլ հաստատություններ, այլ բնակավայր կամ այլ երկիր ընտանիքի տեղափոխման պատճառով,

- ուսումնական տարվա ընթացքում ուսումն ընդհատած (անավարտ թողած) սովորողների ընդհանուր թիվը, այդ թվում՝ հիվանդության, անկարողության, ընտանիքի սոցիալական վիճակի, սովորել չցանկանալու և այլ պատճառներով:

Այս ցուցանիշների հաշվարկի և դրան վերաբերող աղյուսակները լրացնելու համար կատարվել է դիտարկում-փաստագրում և դպրոցի վիճակագրական տվյալների վերլուծություն:

Աղյուսակ 21. Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ տվյալ և նախորդ 2 ուստարիների համար՝ ըստ կրթական աստիճանների

Ցուցանիշ	2015-2016 ուստարի		2016-2017 ուստարի		2017-2018 ուստարի
	VIII-IX դաս.	X-XII դաս.	IX դաս.	X-XII դաս.	X-XII դաս.
Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը. տվյալ կրթական աստիճանում «9» և «10» տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը՝ այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	15 17%	31 15%	8 17%	35 16%	47 19%
Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների(տոկոսի հաշվարկը. տվյալ կրթական աստիճանում «4», «5» և «6» տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը՝ այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	49 55%	116 58%	22 48%	107 48%	136 54%
Ավարտման գործակից՝ ըստ կրթական աստիճանների (հաշվարկ. տարրական, հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական դասարաններում քննություններից դրական գնահատական ստացածների հարաբերությունը՝ նույն դասարանների սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	100%	100%	100%	100%	100%
Երկտարեցիների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	0 0%	0 0%	0 0%	0 0%	0 0%
Կրկնուսույցների մոտ պարապող սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների(տոկոսի հաշվարկ. տվյալ կրթական աստիճանում կրկնուսույցների մոտ պարապողների թվի հարաբերությունը՝ նույն կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	20 22.5%	94 46,8%	7 15%	56 25%	55 22%
Միասնական քննություններին մասնակիցների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ	-	56 62%	-	39 60%	22 55%
Ավարտական և միասնական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ	-	8 8,9%	-	7 11%	5 13%
Հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը և տոկոսը	7 16%	4 4%	9 19.6%	-	-
Հիմնական դպրոցն ավարտած սովորողների թիվը և տոկոսը, որոնք ուսումը շարունակում են ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում	-	-	37 80.4%	-	-
Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունված 12-րդ դասարանի շրջանավարտների թիվը և տոկոսը	-	2 2,2%	-	2 3%	-
Բուհեր ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ	-	71 79%	-	56 86.2%	33 82,5%
Սովորողների բացակայությունների թիվը ժամերով՝ ըստ կրթական աստիճանների .	4035	6871	2242	11323	23124
Դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված	-	-	-	-	-

սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների					
Ուսումնական տարվա ընթացքում սվյալ հաստատությունից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը և տոկոսը ըստ կրթական աստիճանների	2	17	1	18	25
-ՀՀ այլ հաստատություններ տեղափոխվածների թիվը	-	11	0	10	18
-այլ երկրների ուսումնական հաստատություններ տեղափոխվածների թիվը	2	6	1	8	8
Ուսումնական տարվա ընթացքում ուսումն ընդհատած (անավարտ թողած) սովորողների ընդհանուր թիվը ըստ կրթական աստիճանների, այդ թվում	-	-			-
-հիվանդության, անկարողության պատճառով	-	-	-	-	-
-ընտանիքի սոցիալական վիճակի պատճառով	-	-	-	-	-
-սովորել չցանականալու պատճառով/տեղափոխվել է մ/մ հաստատություն/	-	-	-	-	-

Դպրոցի սովորողների տարեկան միջին գնահատականների և պետական ավարտական քննությունների միջին միավորների փոփոխությունների՝ վերլուծություն ըստ կրթական աստիճանների և հիմնական առարկաների:

2015-2016 ուստարում կրթական երկրորդ աստիճանի ավարտական դասարաններում սովորողների տարեկան գնահատականների միջինը 10,5 %-ով բարձր է ավարտական քննությունների միավորների միջին գնահատականներից:

Կրթական երրորդ աստիճանի ավարտական դասարաններում սովորողների տարեկան գնահատականների միջինը 9,5 %-ով բարձր է պետական ավարտական քննությունների միավորների միջին գնահատականներից:

2016-2017 ուստարում կրթական երկրորդ աստիճանի ավարտական դասարաններում սովորողների տարեկան գնահատականների միջինը 7%-ով բարձր է ավարտական քննությունների միավորների միջին գնահատականներից:

Կրթական երրորդ աստիճանի ավարտական դասարաններում սովորողների տարեկան գնահատականների միջինը 1%-ով բարձր է պետական ավարտական քննությունների միավորների միջին գնահատականներից:

2017-2018 ուստարում կրթական երրորդ աստիճանի ավարտական դասարաններում սովորողների տարեկան գնահատականների միջինը ընդամենը 5%-ով է բարձր պետական ավարտական քննությունների միավորների միջին գնահատականներից:

*2018 թ. բուհեր ընդունված 33 շրջանավարտներից 10-ը ընդունվել են անվճար հիմունքներով :
3 շրջանավարտ պատրաստվում են մասնակցելու հեռակա ուսուցման քննություններին:*

Դպրոցում սովորողների մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում ու մարզական, մշակութի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթներին սովորողների մասնակցության աստիճանի վերլուծություն

Հաստատության սովորողների առաջադիմությունը նկարագրող ցուցանիշներից են.

- մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաների ու մարզական, մշակութի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ,
- մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներին մարզական, մշակութի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթներում մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը՝ մասնակիցների ընդհանուր թվի համեմատ:

Այս ցուցանիշների հաշվարկի և դրան վերաբերող աղյուսակները լրացնելու համար կատարվել է դիտարկում-փաստագրում և դպրոցի վիճակագրական տվյալների վերլուծություն:

Աղյուսակ 22. Տվյալներ մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում ու մարզական, մշակույթի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթներին սովորողների մասնակցության վերաբերյալ

Ցուցանիշ	2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի	2017-2018 ուստարի
Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ	33 11%	32 12%	24 10%
Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը	2 0.68%	5 1,9%	4 1,6%
Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ	3 1%	5 1,9%	4 1,6%
7. Հայաստանի երիտասարդական միության կողմից կազմակերպվել է համաժողովներ, որտեղ քննարկվել են Երևանի և մարզերի դպրոցների ԱԽ-ի կողմից արված աշխատանքները, առաջարկությունները և նրանց հուզող	25.05.16թ. 24.07.17թ.	1.7% 0.4%	

հարցերը:			ակտիվ գործունեության համար արժանացել են շնորհակալագրի:
8. Կազմակերպվել է քննարկում «Ես ցանկանում եմ հայոց բանակի սպա դառնալ» թեմայով	27.10.16թ.	15%	Նպատակն է եղել տեղեկատվա-քարոզչական ծրագրին աջակցելու նպատակով կազմվել առաջարկությունների և նկատառումների ցանկ և ուղարկվել ԿԳՆ:
9. Քննարկվել է սովորողների առողջությանն ուղղված դպրոցում իրականացվող միջոցառումների աջակցելու և օժանդակելու հարցը	09.11.16թ.	10%	Իրականացվել է մի շարք ծրագրեր «Վնասակար սովորույթներ» թեմայով
10. Կազմակերպվել է «ՄԻԱՎ, ՁԻԱՀ-ի կանխարգելման ուղիները» թեմայով քննարկում	01.12.16թ.	16.8%	Սովորողներին աջակցել է դպրոցի բուժաշխատողը:
11. Կազմակերպվել է «Ես աշակերտ եմ» թեմայով սեմինար-քննարկում	01.12.16թ. 18.12.17թ.	15% 13.6%	Ծրագիրը իրականացվել է ՀԵՄ-ի հետ համատեղ: Կազմակերպվել է քննարկում սովորողների ինքնավարության և ժողովրդավարության սկզբունքների մասին:
12. Կազմակերպվել է «Մահապարտներ» ֆիլմի դիտում և քննարկում	30.01.17թ.- 03.02.17թ.	25%	Քննարկումը կազմակերպվել է Հայոց բանակի կազմավորման 25-րդ ամյակի կապակցությամբ: Սով-ին աջակցել է ՄԿԱ-ի գծով տեղակալը և հայոց պատմության ուսուցիչը:
13. Կազմակերպվել է «Մասնագիտական կողմնորոշում» թեմայով կլոր-սեղան քննարկում	28.04.17թ. 10.04.18թ.	12% 8%	Նպատակն է եղել նպաստել սովորողների մասնագիտության ընտրության ճիշտ կողմնորոշմանը:
14. Կազմակերպվել է «Արտագաղթ, արտագաղթի հետևանքները» թեմայով բանավեճ	06.12.17թ.	6	Սովորողները անմիջապես ներգրավվեցին թեմայի մեջ և կազմակերպվեց բուն քննարկում
15. Կազմակերպվել է Հայոց բանակի կազմավորման 26-րդ ամյակին նվիրված միջոցառումների քննարկում	Հունվար 2018թ.	10%	Նախաձեռնվել և իրականացվել են օրվա խորհրդին համապատասխան միջոցառումներ:
16. Կազմակերպվել է Եղեռնի 103-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների քննարկում. 1. Ընթերցանության ժամ, Մեծ եղեռնը վերապրածների հուշերը 2. Հարգանքի տուրք սրբադասված նահատակներին. այցելություն Եղեռնի հուշահամալիր	2018թ ապրիլ	5%	Ընթերցանության ժամը հարգելի պատճառներով չի իրականացել և ընդգրկվել է մյուս ուսումնական տարվա ընթացքում նախատեսվելիք միջոցառումների շարքում
17. Կազմակերպվել են քննարկումներ սովորող-սովորող, սովորող-ուսուցիչ հարաբերությունների շուրջ	Ուստարվա ընթացքում	85%	Քննարկումները իրականացել են դասարաններում՝ դասղեկի անմիջական մասնակցությամբ
Նկարագրել սովորող - սովորող և սովորող - ուսուցիչ հարաբերություններն ուսումնական հաստատությունում			

Դպրոցում կիրառվող ուսուցման ոչ դաս-դասարանային եղանակը նպաստում է սովորողների փոխհարաբերությունների սերտացմանը և համագործակցային հմտությունների զարգացմանը: Սովորողները օգնում են միմյանց, անհատական աշխատանքը իր տեղը զիջում է զույգային կամ թիմային աշխատանքին: Սովորողները մեծ սիրով համատեղ կատարում են հասարակական և կազմակերպչական աշխատանքներ: Մթնոլորտը դպրոցում առողջ է, կա միմյանց նկատմամբ հարգալից վերաբերմունք, միմյանց օգնելու պատրաստակամություն և կազմակերպվածություն.: Ուսուցիչը սովորողների հետ իր հարաբերությունները կառուցում է փոխադարձ հարգանքի վրա: Ուսուցիչը նպաստում է սովորողների մեջ դրական անձնային հատկանիշների և միջանձնային որակների զարգացմանը, պահանջկոտ և հետևողական է բոլոր սովորողների նկատմամբ, ընդ որում այդ պահանջկոտությունը հիմնավորված է և ունի դրական ուղղվածություն: Այս ամենի հետևանքով ուսուցիչ -սովորող հարաբերությունները դրված են բարձր մակարդակի վրա, առկա է փոխադարձ հարգանք, ջերմ հարաբերություններ:

Դպրոցում գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդ, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները: Սովորողները հատկապես ակտիվ կերպով մասնակցում են աշակերտական խորհրդի նախագահի ընտրությանը: Դպրոցի աշակերտական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, սովորողների, ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում, իրականացնում է հանրօգուտ աշխատանք: Սակայն անհրաժեշտություն կա սովորողների շրջանում արմատացնել իրենց հուզող հարցերը աշակերտական խորհրդի միջոցով լուծելու մշակույթ և սովորույթ:

Աղյուսակ 31. Տվյալներ դպրոցի աշակերտական խորհրդի գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ			
Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերն ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն.			
Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերն ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն.	Ամսաթիվ	Աջակցություն ստացած սովորողների թիվը և %-ը սովորողների ընդհ. թվի նկատմամբ	Մեկնաբանություն
1. Սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին աջակցելու նպատակով ԱԽ-ի 1-ին նիստի որոշմամբ ձևավորվել է ուսումնադաստիարակչական մասնագիտացված հանձնախումբ:	07.10.15թ.	75 սովորող 25.8%	ԱԽ-ը համագործակցել է տնօրենի տեղակալների և դասղեկների հետ:
Ուսումնադաստիարակչական հանձնախումբը կատարել է հետևյալ աշխատանքները.	04.10.16թ.	62 սովորող 23%	
ա. Կիսամյակային ամփոփումների ժամանակ բացահայտել է չառաջադիմող սովորողներին և պարզվել հետ մնալու պատճառները, բ. Ձեռնարկել է միջոցներ հետ մնացող սովորողների ուսման որակը բարձրացնելու համար:	02.10.17թ.	52 սովորող 20.8%	
2. ԱԽ-ի կողմից իրականացվել են միջոցառումներ սովորողների անհարգելի բացայակությունների նվազեցման ուղղությամբ. Դասարանական աշակերտական խորհուրդները համագործակցել են դասղեկների հետ և համատեղ կատարել հետևյալ միջոցառումները. ա/ ճշտել են անհարգելի բացակայող համադասարանցու բացակայության պատճառը, բ/խոսել են ծնողի հետ, գ/խոսել են սովորողի հետ, փորձելով գտնել	Յուր. ուստարվա ընթացքում	Միջինը 23 սովորող 9.2%	ԱԽ-ը համագործակցել է տնօրենի տեղակալների և դասղեկների հետ:

<p>բացակայության պատճառը:</p> <p>3. Դպրոցում կարգապահական խնդիրներ առաջացնող սովորողներին վերահսկելու նպատակով համատեղ կազմակերպել է աշակերտական և ուսուցչական հերթապահություն:</p>	<p>07.10.15թ. 04.10.16թ. 02.10.17թ.</p>	<p>4% 3% 3.2%</p>	<p>ԱԽ-ն աջակցություն է ստացել տնօրենի՝ ՄԿԱ-ի գծով տեղակալի կողմից:</p>
<p>4. Աջակցել տնօրինությանը դժվար դաստիարակվող սովորողների հետ տարվող աշխատանքներում/դպրոցի ներքին կարգ. կանոնները խախտելու դեպքեր, ծխախոտի օգտագործման դեմ պայքար/:</p> <p>Աշակերտական խորհրդի ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով</p>	<p>2016թ. փետրվար 2016թ. նոյեմբեր 2017թ. դեկտեմբեր</p>	<p>10% 9% 8%</p>	<p>Կազմակերպվել են քննարկումներ, զրույցներ:</p>
<p>Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով</p>	<p>Ամսաթիվ</p>	<p>Աջակցություն ստացած սովորողների թիվը և %՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ</p>	<p>Մեկնաբանություն</p>
<p>1. ԱԽ-ի որոշմամբ դպրոցում գործել է ուսումնադաստիարակչական հանձնախումբ, որը զբաղվում է կարգապահական հարցերով: Ուսումնադաստիարակչական հանձնախումբը աշխորհրդի նիստերում քննարկման է դնում կարգապահական խնդիրներ առաջացնող սովորողների հարցը: Նրանց նախաձեռնությամբ ուստարվա ընթացքում դասարաններում կազմակերպվում են քննարկումներ:</p> <p>2. ԱԽ-ն հայտնաբերում է լիդերներին և աշխատանք է տանում նրանց հետ, համագործակցում է տնօրենի տեղակալների, դասղեկների և ուսուցիչների հետ:</p>	<p>07.10.15թ 04.10.16թ. 02.10.17թ. 2015-2016 2016-2017 2017-2018</p>	<p>4% 3% 4% 8/2.7% 6/2.2% 10/4%</p>	<p>ԱԽ-ն համագործակցում է տնօրենի տեղակալների, դասղեկների և ուսուցիչների հետ:</p> <p>Լիդերների հայտնաբերման նպատակը նրանց բացասական և դրական հատկանիշների բացահայտումն է, բացասականը հնարավորինս չեզոքացնելը և դրականը օգտագործելը՝ կազմակերպական, կարգապահական հարցերը լուծելու ժամանակ:</p>
<p>3. ԱԽ-ն դասղեկների հետ միասին իրականացրել է զրույց-քննարկում թիրախային խմբի հետ <<Միջանձնային կոնֆլիկտներ և դրանց հաղթահարման ուղիները>> թեմայով:</p> <p>4. ԱԽ-ն տնօրինության հետ համատեղ կազմակերպել է կյոթ-սեղան քննարկումներ.</p> <p>1. «Սովորող-սովորող»</p> <p>2. «Սովորող- ուսուցիչ» թեմաներով</p>	<p>Ուստարվա ընթացքում</p> <p>08.04.2016թ. 15.04.2016թ. 28.04.2017թ.</p>	<p>15 սովորող 6 %</p> <p>50 սովորող 17.2%</p> <p>35 սովորող 13.1%</p>	<p>Նպատակն է սովորողներին օգնել, որպեսզի նրանք գիտակցեն, որ կոնֆլիկտը հասարակական կյանքի նորմալ վիճակ և օրինաչափ երևույթ է: Պարզապես պետք է գտնել այն լուծելու ամենահարմար տարբերակները:</p> <p>Նպատակն է</p> <p>1. Մեծացնել սովորողների միջանձնային շփումը</p> <p>2. Կարևորել կոնֆլիկտային իրավիճակներում սովորողների հավասարակշռության պահպանումը:</p>

<p>5. ԱԽ-ն կազմակերպել է գրույց-քննարկումներ համբերատարության, հավասարակշռության, փոխզիջման մեթոդների կիրառման վերաբերյալ:</p>	<p>2016-2017 ուստարվա ընթացք</p>	<p>26 սովորող 9.7%</p>	<p>Նպատակն է սովորողներին օգնել գտնելու կոնֆլիկտների լուծման ամենահարմար ճանապարհները, ցույց տալ, որ համբերությունը կրթում է մարդու սիրտը, միտքը և մարդը դառնում է ավելի խոհեմ, չի ընկնում սխալների մեջ:</p>
<p>6. Աշակերտական խորհուրդը տնօրինության հետ համատեղ դասողեկական ժամերին իրականացրել է</p> <p>ա. «Ուժի չարաշահում», «Բռնությունը չարիք է»</p> <p>բ. «Վարվելակերպի գեղագիտությունը»</p> <p>գ. «Բարություն, մարդասիրություն, գթասրտություն»</p> <p>դ. «Գնահատել սեփական արարքները»</p> <p>ե. «Ընկերասիրություն, հանդուրժողականություն, համբերատարություն»</p> <p>զ. «Կենցաղի և վարքի կուլտուրան»</p> <p>է. «Ամենամեծ առաքիլությունն ու մոլորությունը. խոնարհություն, հպարտություն» թեմաներով:</p>	<p>սեպտեմբեր 2017թ հոկտեմբեր 2017թ նոյեմբեր 2017թ. հունվար 2018թ փետրվար 2018թ ապրիլ 2018թ.</p>	<p>250/86%</p> <p>268/100%</p>	<p>Նպատակն է.</p> <p>1. Նպաստել սովորողների մարդասիրական դաս-ը</p> <p>2. Կարևորել հավասարակշիռ վարքագիծը, ագրեսիայի թոթափումը, զիջողականությունը:</p>
<p>Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած միջոցառումները՝ ներառյալ շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները, դրանց հաճախականությունը և մասնակից սովորողների տոկոսը</p> <p>Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած վերոնշյալ միջոցառումները</p>	<p>Ամսաթիվ</p>	<p>Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ</p>	<p>Մեկնաբանություն</p>
<p>Կազմակերպվել են Անկախության օրվան նվիրված միջոցառումներ.</p> <p>1. Դասախոսություն</p> <p>2. Շարադրությունների մրցույթի անցկացում «Իմ անկախ Հայաստան» թեմաներով:</p>	<p>16.06.15-18.09.15 23.09.2016թ. 19.09.17-22.09.17</p>	<p>11%</p> <p>8%</p> <p>8%</p>	<p>ԱԽ-ն համագործակցել է պատմության և հայոց լեզվի ուսուցիչների հետ:</p>
<p>2.Գիտամշակութային մասնագիտացված հանձնախմբի կողմից ուսուցչի տոնի առթիվ կազմակերպվել է «Մեր շնորհալիները» խորագրով գեղագիտական միջոցառում:</p>	<p>05.10.15թ.</p>	<p>8.6%</p>	<p>Կազմակերպվել են համադպրոցական միջոցառումներ:</p>
<p>Կազմակերպվել է ուսուցիչների հանդիսավոր ընդունելություն:</p>	<p>05.10.2017թ.</p>	<p>7.5%</p>	
<p>3. Կազմակերպվել է «Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ» ինտելեկտուալ խաղի դպրոցական տարբերակը:</p>	<p>2015-2016թթ. 2016-2017թթ. 2017-2018թթ.</p>	<p>17.2%</p> <p>18.7%</p> <p>8%</p>	<p>Սովորողների գիտելիքների հարստացման, դպրոցական առօրյան հետաքրքրացնելու նպատակով կազմակերպվել են ինտելեկտուալ խաղեր:</p>
<p>4.Մասնակցություն համալիրում համալիրում կազմակերպված երիտասարդության օրվան նվիրված տոնական համերգին:</p>	<p>Մարգահամերգային կազմակերպված օրվան նվիրված</p> <p>17.11.16թ. 17.11.17թ.</p>	<p>3.7%</p> <p>5.7%</p>	<p>Երիտասարդական հետ համագործակցության շրջանակներում դպրոցի որոշ սովորողներ մասնակցեցին տոնական համերգի:</p>
<p>5. Սպորտային խաղեր.</p>			

1. Կազմակերպվել են միջոցասարանային սպորտային խաղեր /ֆուտբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս/ 2. Հրաձգության մրցումներ	դեկտեմբեր 2015թ փետրվար 2016թ հունվար 2015թ 27.01-31.01.17թ	15% 34% 5% 6.3%	Առողջ սպրեյակերպի նպատակով դպրոցի ԱԽ, մասնավորապես սպորտային /ռազմամար-զական/ հանձնախումբը կազմակերպել են սպորտային խաղեր, մրցումներ՝ համագործակ-ցելով ՄԿԱ-ի գծով տեղակալի և ֆիզկուլտու-րայի ուսուցչի հետ:
3. Շախմատի ներդպրոցական մրցումներ	հոկտեմբեր 2016թ	11.2%	
4. Վոլեյբոլի միջոցասարանային մրցումներ	դեկտեմբեր 2016թ 17.11.17-19.12.17	11% 22.8%	
5. Շաշկիի ներդպրոցական մրցումներ	21.10.17- 24.10.17	5.6%	
6. Բազկամարտի ներդպրոցական մրցումներ	22.02.2018թ.	4.7%	
7.«Ով ավելի շատ» խորագրով մրցույթ՝ ձեռքերի ծալում և ուղղում հենում-պատկած դրությունից ծափերով	15.03.18թ.	5%	
6. Պատրաստվել են բուկլետներ «Վնասակար սովորույթներ» թեմայով	12.11.16թ. 01.12.17-15.12.17	9.7% 9%	Սովորողների առողջու-թյանն ուղղված միջոցա-ռումների կազմակերպում
7. Աշխրհիրդը նախաձեռնել և իրականացրել է «Վնասակար սովորույթներ»/թմրամիջոց, ծխախոտ/ թեմայով էլ. նյութերի դիտում	20.11.16թ.	9.3%	
8. Կազմակերպել է դպրոցի ամանորյա ձևավորում	յուր. ուստարվա դեկտեմբեր	80%	Նպատակը եղել է դպրոցում ամանորյա տոնական տրամադրու-թյուն ստեղծելը: ՄԻԱՎ-ի և հեպատիտ B-ի ու C-ի նկատմամբ հետազոտության եվրո-պական շաբաթվա շրջանակներում սով-ը մասնակցել են սեմինարի:
9. ԱԽ-ի անդամները մասնակցել են ՀՀ Երիտասարդական միության կողմից կազմակերպած առողջապահական ծրագրին	նոյեմբեր 2016թ.	1.4%	
10. ՄԻԱՎ-ի և հեպատիտ B-ի ու C-ի նկատմամբ հետազոտության եվրոպական շաբաթվա շրջանակներում ԱԽ-ն կազմակերպել է «ՄԻԱՎ, ՉԻԱՀ-ի կանխարգելման ուղիներ» թեմայով գրույց Պատրաստվել են բուկլետներ, տեղեկատվական թերթիկներ և բաժանվել են սովորողներին	01.11.16թ. 01.12.17-15.12.17	16.8% 9%	Նպատակն էր սովորողների իրազեկության բարձրացնելը ՄԻԱՎ-ի և հեպատիտ B-ի ու C-ի վերաբերյալ: ԱԽ-ին աջակցել է դպրոցի բուժաշխատողը:
11. Աշխրհիրդում իրականացվել է «Ես աշակերտ եմ» տեղեկատվական ծրագիրը	01.12.16թ. 18.12.17թ.	15% 13.6%	ԱԽ-ի նախագահը և տնօրենի՝ ՄԿԱ-ի գծով տեղակալը ԱԽ-ի անդամներին ներկայացրեցին Ախ-ի կանոնադրության մանրամասները, խոսեցին սով-ի ինքնավարության և ժողովրդավարության սկզբունքների մասին:
12. Կազմակերպվել է գեղանկարչական ցուցահանդեսներ.			

<p>1. Մասնակցություն Հայաստանի երիտ. միության կազմակերպած «Կա՛նք, պիտի՛ լինենք ու դեռ շատանա՛նք» համադպրոցական գեղանկարչ. ցուցահանդես</p> <p>2. Եռեղնի 100-ամյա տարելիցին նվիրված գեղանկարչական ցուցահանդես</p> <p>3. «Վնասակար սովորությունների ազդեցությունը կյանքի որակի վրա» խորագրով ցուցահանդես</p> <p>13. Հայոց բանակի կազմավորման 25-րդ ամյակի կապակցությամբ կազմակերպվել է ուսուցիչների և սովորողների հանդիսավոր րնդունելություն</p>	<p>մայիս 2014թ.</p> <p>ապրիլ 2015թ.</p> <p>դեկտեմբեր 2016թ</p> <p>27.01.2017թ.</p>	<p>0.5%</p> <p>7%</p> <p>3.7%</p> <p>80%</p>	<p>Գեղագիտական դաստիարակու-թյանը նպաստելու, ճաշակ զարգացնելու, դպրոցի մշակութային կյանքը ակտիվացնելու նպատակով կազմակերպվել են տարբեր միջոցառումներ:</p> <p>Համադպրոցական միջոցառում</p>
<p>14. 10-րդ դաս-ում կազմակերպվել է «Մահապարտներ» ֆիլմի դիտում և քննարկում</p> <p>15. Կանանց միջազգային օրվա կապակցությամբ ուսուցիչների համար կազմակերպվել են միջոցառումներ/հանդիսավոր րնդունելություն/</p>	<p>30.01.17թ.- 03.02.17թ.</p> <p>09.03.16թ.</p> <p>09.03.17թ.</p> <p>07.03.18թ.</p>	<p>22.4%</p> <p>50%</p> <p>80%</p> <p>70%</p>	<p>Հայոց բանակի կազմավորման 25-րդ ամյակի կապակցությամբ դպրոցի ԱԽ-ի նախաձեռնությամբ իրակա-նացվել են մի շարք միջոցառումներ: Աջակցել է պատմության ուսուցիչ Վ. Ղազարյանը:</p> <p>Համադպրոցական միջոցառում</p>
<p>16. Կազմակերպել է բարեգործական ակցիաներ.</p> <p>1. Օգնություն սահմանամերձ բնակավայրերի անապահով ընտանիքների երեխաներին</p> <p>2. «Օգնիր զինվորին» բարեգործական ակցիայի կազմակերպում</p> <p>3. «Եթե բոլորը» հաղորդաշարին մասնակցած ուղեղային կաթված ունեցող երեխայի բուժման նպատակով կազմակերպված բարեգործական ակցիա:</p> <p>17. Կազմակերպվել է Եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումներ.</p> <p>1. Այցելություն Եղեռնի հուշահամալիր</p> <p>20. Կազմակերպվել է այցելություն EXPO կրթական ցուցահանդես</p> <p>21. Կլոր-սեղան քննարկումներ, սեմինարներ, բանավեճեր հետևյալ թեմաներով.</p> <p>1. «Սովորող-սովորող հարաբերություններ»</p> <p>2. «Ուսուցիչ- սովորող հարաբերություններ»</p> <p>3. «Մասնագիտական կողմնորոշում»</p>	<p>մարտ-ապրիլ 2016թ.</p> <p>ապրիլ-մայիս 2017թ.</p> <p>յուր. ուստարվա ապրիլ</p> <p>ապրիլ 2016թ.</p> <p>ապրիլ 2017թ.</p> <p>մարտ 2018թ.</p> <p>08.04.2016թ.</p> <p>15.04.2016թ.</p> <p>26.04.2017թ</p> <p>10.04.2018թ.</p>	<p>80%</p> <p>10%</p> <p>25%</p> <p>8.6%</p> <p>6%</p> <p>4%</p> <p>17.2%</p> <p>15%</p> <p>13%</p> <p>8%</p>	<p>Օգնությունը տրամադրվել է խաղալիքների, հագուստի, գրենական պիտույքների, դրամական միջոցների, հիգիենայի պարագաների, պարենա-մթերքի տեսքով:</p> <p>Պատմական ժառանգականության պահպանման կարևորությանն ուղղված ծրագրեր: Այցելությունը իրականաց-վել է տնօրենի՝ ՄԿԱ-ի գծով տեղակալի և դաս- դեկների աջակցությամբ: Նպատակն է եղել բարելավել սովորողների միջանձ- նային շփումը, նպաստել ուսուցիչ- սովորող ջերմ հարաբերություններին: Օգնել սովորողին</p>

4.«Արտագաղթ, արտագաղթի հետևանքները»	06.12.2017թ.	6%	Ճիշտ կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում, նպաստել հայրենասիրական դաստ-ը:
5. ԱԽ-ի նախագահը մասնակցել է Ծաղկաձորում կազմակերպված ԱԽ-ի 5-րդ համաժողովին	24.07.2017թ.	0.3%	
17. Կազմակերպվել է ուսուցիչների մրցանակաբաշխություն:	06.05.2016թ.	100%	Ուսուցիչները սովորողների կողմից արժանացել են պատվոգրերի: Դպրոցում ստեղծվեց օրվա խորհուրդին բնորոշ մթնոլորտ:
Հայոց բանակի կազմավորման 26-րդ ամյակին նվիրված միջոցառումներ.			
1.Կազմակերպվեց «Ապրիլյան քառօրյա պատերազմը» խորագրով վավերագրական ֆիլմի դիտում:	26.01.2018թ.	16%	Շաբաթօրյակներին մասնակցելու նպատակն է. 1.Անձի մեջ ձևավորել սրտացավություն իր քաղաքի, իր դպրոցի նկատմամբ: 2.Սովորողներին մասնակից դարձնելու հասարակական աշխատանքներին:
2.Պատրաստվեցին կրծքանշաններ և բաժանվեցին սովորողներին:	29.01.2018թ.		
3.«Հայոց բանակի կազմավորում» թեմայով կազմակերպվեց դասախոսություն:	29.01.2018թ.	9%	
18.Աշակերտական համակազմը մասնակցել է համայնքի, դպրոցի կողմից կազմակերպած համաքաղաքային, համդպրոցական բոլոր շաբաթօրյակներին:	Յուր. ուստարվա ընթացքում	10%	
Իրականացրել է բարեկարգման աշխատանքներ /Ա. Երզնկյանի արձանի շուրջ, հուշաքարի շուրջ/, անցկացրել է սեմինարներ			

Նկարագրել աշակերտական խորհրդի գործունեության սկզբունքները և ձևերը՝ համապատասխանությունը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին
Դպրոցի աշակերտական խորհուրդը օժտված է ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով, որի գործունեության հիմնական սկզբունքներն են կամավորությունը, սովորողների իրավահավասարությունը, ժողովրդավարությունը, հրապարակայնությունը: Ազատ են անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին կարծիք հայտնելու, իրենց իրավունքները պաշտպանելու գործում: Ազատ համագործակցում են մյուս կրթական հաստատությունների ԱԽ-ի հետ, իրականացնում են համատեղ ծրագրեր: Համագործակցում է դասարանական խորհուրդների հետ, համակարգում է դասարանական խորհուրդների և համակարգող հանձնախմբերի գործունեությունը: Հանդիսանում է սովորողների ներկայացուցիչը դպրոցի մյուս մարմինների հետ փոխհարաբերություններում, առաջարկություններ է ներկայացնում տնօրինությանը:

Ուսումնական հաստատության ծնողական խորհուրդը համագործակցում է տնօրինության և աշակերտական խորհրդի հետ, նպաստում սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին, սակայն այդ համագործակցությունը առավել ակտիվության կարիք ունի:

Աղյուսակ 32 . Տվյալներ դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ	2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի	2016-2017 ուստարի
Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.	3/100%	5/100%	4/100%

Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը	55	35	48
Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը	-	-	-
Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը 1 ուստարվա ընթացքում	3	4	3
Ծնողական խորհրդի կողմից դպրոցի ծնողագուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարում	10.3%	10%	11%
Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը.	30%	35%	32%
Ծնողների տոկոսը, որոնք օգտվում են http://www.dasaran.am , http://ktak.am , http://www.armedu.am , http://forum.armedu.am/ , http://lib.armedu.am , և այլ կրթական կայքերից, ինչպես նաև դպրոցի	30%	30%	36%
Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները			
Նկարագրել վերջին 3 տարում սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողխորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները	Ամսաթիվ	Առաջարկների քննարկմանը մասնակից ծնողների թիվը	Մեկնաբանություն
1. Դպրոցի և ծնողների միջև կապերը ամրապնդելու, մանկ. աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցերում միասնական պահանջների ձևավորման համար առաջարկվել է տնօրինությանը համատեղ կազմակերպել միջոցառումների շարք:	2015թ. սեպտեմբեր 2016 սեպտեմբեր 2017 սեպտեմբեր	15 13 12	Կազմակերպվել են դասղեկների և ծնողների հետ հանդիպումներ, կատարվել քննարկումներ
2. Առաջարկվել է մասնակցել սովորողների ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը	15.05.2014թ. 13.04.2017թ.	20 13	Հիմք՝ ԾԽ հ. 3 նիստ Հիմք՝ ԾԽ հ. 3 նիստ
3. Առաջարկվել է «Օգնիր դպրոցին» ծրագրի շրջանակներում դպրոցին տրամադրել ֆինանսական օգնություն	2015-2016 2016-2017	15 13	Եվս մեկ դասասենյակում ինտերակտիվ պրոեկտոր ունենալու նպատակով:
4. Քննարկվել է դպրոցում ծխելու դեպքերը կանխելուն ուղղված բոլոր հնարավոր միջոցները և դպրոցի բարեկարգման հարցերում ծնողների մասնակցության հարցը	30.04.2016թ. 29.10.2016թ. 27.10.17թ.	22 13 12	Հիմք՝ ԾԽ հ. 3 նիստ Հիմք՝ ԾԽ հ. 2 նիստ Հիմք՝ ԾԽ 2 նիստ
5. Առաջարկվել է արձակուրդների ժամանակ սովորողների կուլեկտիվ հանգիստ և ժամանց կազմակերպել	Ուստարվա ընթացքում	50	Խնդրել են թույլտվություն հայրենագիտական ճամփորդությունների կազմակերպման համար:
Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումները՝ (հանդեսներ, հավաքներ, երեկույթներ, էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն, մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը			
Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները	Ամսաթիվ	Մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը	Ծնողական ներդրումների չափը
1.Այցելություններ մշակութային օջախներ	2015-2016թթ. 2016-2017թթ.	ծնող՝ 45 սովորող՝ 62% ծնող՝ 27 սովորող՝ 65%	

	2017-2018թթ.	ծնող՝ 40 սովորող՝ 48%	
2.Ճանաչողական այցեր	2015-2016թթ. 2016-2017թթ. 2017-2018թթ.	ծնող՝ 17 սովորող՝ 59% ծնող՝ 49 սովորող՝ 70% ծնող՝ 45 սովորող՝ 60%	
3. Հավաքներ, երեկոյթներ	2015-2016թթ. 2016-2017թթ. 2017-2018թթ.	Ծնող՝ 30% Սովորող՝ 90% Ծնող՝ 70 Սովորող՝ 85% Ծնող՝ 74 Սովորող՝ 60%	
4. Հայրենագիտական ճամփորդություններ			
Էջմիածին, Կարբի, Բազմաղբյուր, Աշտարակ, Արզնի, Աղվերան Ս. Դեղերավանք	2015-2016թթ. հունիս-հուլիս	Ծնողներ՝ 50 Սովորողներ՝ 51%	
Բյուրական, Սևակավան, Նորավանք, Խոր Վիրապ, Ծաղկաձոր, Տավուշի մարզ, Դենդրոպարկ-Լոռվա բերդ, Դիլիջան, Աշտարակ, Զվարթնոց, Սարդարապատ	2016-2017թթ. ուստարվա ընթացք	Ծնողներ՝ 72 Սովորողներ՝ 65%	
Ամբերդ, Սաղմոսավանք, Հովհանավանք, Բջնի, Հաղարծին, Գոշավանք, Նորավանք, Օձուն, Հաղպատ, Սանահին, Բյուրական, Սարդարապատ, Աղվերան	2017-2018թթ. ուստարվա ընթացք	Ծնողներ՝ 62 Սովորողներ՝ 68%	
<p>Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները</p> <p>Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները</p>			
	Ամսաթիվ	Առաջարկությունների քննարկմանը մասնակից ծնողների թիվը և ուսուցիչներին թիվը, ովքեր ծնողական խորհրդի կողմից առաջարկվել են խրախուսման կամ կարգապահական տույժի	Մեկնաբանություններ
Ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը	Ամսաթիվ		Մեկնաբանություններ
Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը			
1.ԾԽ-ի կանոնադրության և կազմի հաստատման հարցը	24.09.2015թ. 28.09.2016թ. 26.09.2017թ.		Հաստատվել է ԾԽ-ի կազմը՝ 15 անդամ 13 անդամ 12 անդամ
2.ԾԽ-ի նախագահի, քարտուղարի, կոլեգիալ կառավարման խորհրդի անդամների ընտրության հարցը	24.09.2015թ. 15.12.2015թ. 28.09.2016թ. 26.09.2017թ.		2017-2018 ուստարվա ԾԽ-ի նախագահ է ընտրվել Ա.Դանիելյանը որը 26.09.2017թ ԾԽ հ. 1 նիստի որոշմամբ ընտրվել է նաև դպրոցի կոլեգիալ կառավարման խորհրդի անդամ:
3.Տնօրենի հաղորդումը Հաստատության	Յուր. ուստարի		Ընդունվել է ի գիտություն, արվել են

<p>գործունեության վիճակի և հեռանկարային ծրագրերի մասին 4.Ներկայացվել է նախորդ ուստարվա ներքին գնահատման արդյունքները</p>	<p>սեպտեմբեր 24.09.2015թ. 28.09.2016թ. 26.09.2017թ.</p>	<p>առաջարկություններ: Ընդունվել է ի գիտություն, տեղի են ունեցել քննարկումներ:</p>
<p>5.Ներկայացվել և քննարկվել է դպրոցի հաջորդ տարվա բյուջեի նախագծի նախնական տարբերակը</p>	<p>24.09.2015թ. 28.09.2016թ. 26.09.2017թ.</p>	<p>Ի գիտություն է ընդունվել ֆինանսավորման փոփոխությունները և բյուջեին տրվել է հավանություն:</p>
<p>6. Քննարկվել է ծնողների իրավունքների և պարտականությունների իրազեկման հարցը</p>	<p>յուր. ուստարի սեպտեմբեր</p>	<p>Կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկման նպատակով:</p>
<p>7. Ծնողագուրկ և սոցիալապես անապահով սովորողներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու հարցը</p>	<p>յուր. ուստարի հոկտեմբեր</p>	<p>Տնօրինության կողմից ներկայացված ծնողագուրկ և սոցիալապես անապահով սովորողների ցուցակները հաստատել:</p>
<p>8. Դպրոցական արձակուրդի օրերին սովորողների հանգստի ու ժամանցի կազմակերպման հարցը</p>	<p>Յուր. ուստարվա ընթացք</p>	<p>Առաջարկել տնօրինությանը վերոնշյալ սովորողներին գրքերը տրամադրել որոշակի զեղչերով կամ անվճար: Կազմել համատեղ միջոցառումների ծրագիր:</p>
<p>9. Արտադպրոցական և արտադասարնական միջոցառումներում ծնողների մասնակցության հարցը</p>	<p>Յուր. ուստարվա 1-ին ծնողական ժողով</p>	<p>Արտադպրոցական և արտադասարնական միջոցառումներում ծնողների մասնակցության նպատակով կազմավորվել է դասարանների ծնողական խորհուրդները:</p>
<p>11. Քննարկվել են ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված աշխատանքների կազմակերպման հարցը/ դաս-ի ծնողական խորհուրդներ/</p>	<p>Յուր. ուստարվա ընթացքում</p>	<p>Սեղան-աթոռոթի, պահարանների, կոտրված ապակիների, դռների փականների, սանհանգույցների վերանորոգման աշխատանքների մասնակցություն:</p>
<p>12. Քննարկվել է ՀՀՊՆ կողմից առաջարկված «Ես ցանկանում եմ հայոց բանակի սպա դառնալ» տեղակատվա-քարոզչական ծրագիր կազմելու վերաբերյալ առաջարկություններ և նկատառումներ անելու հարցը:</p>	<p>27.10.2016թ.</p>	<p>Ծնողական խորհրդի կողմից արված առաջարկություններն ու նկատառումներն ամփոփվեցին և ուղարկվեցին ՀՀ ԿԳՆ՝ ՀՀ ՊՆ ներկայացնելու համար:</p>
<p>13. Քննարկվել է դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացմանն աջակցելու հարցը:</p>	<p>15.05.14թ. 13.04.17թ.</p>	<p>Աջակցել են սովորողների ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը ուղղված աշխ-ին:</p>
<p>14. Քննարկվել է սովորողների իրավունքների պաշտպանության հարցը:</p>	<p>01.04.2015թ. 01.12.2016թ.</p>	<p>Դպրոցի ԱԽ -ի հետ համատեղ կազմակերպել է սեմինար-պարպմունքներ՝ սովորողներին իրենց իրավունքների, պարտականությունների մասին իրազեկելու նպատակով:</p>
<p>Նկարագրել ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցությունը և դրա ձևերը</p>		
<p>Սովորողների նկատմամբ միասնական պահանջներ ձևավորելու նպատակով համագործակցում են դպրոցի ԱԽ-ը և ՕԽ-ը: Առաջացած խնդիրների լուծման նպատակով տեղի են ունենում խորհրդի նիստեր, համագործակցում են սովորողների միջև ծագած խնդիրները լուծելու հարցում, միասնաբար մասնակցում են դպրոցի ներքին և արտաքին բարեկարգման աշխատանքներին: ԱՇ-ի անդամները տեղեկացնում են ՕԽ-ի անդամներին, թե ինչպիսի միջոցառումներ են ցանկանում կազմակերպել և բոլոր միջոցառումները կազմակերպվում են համագործակցությամբ:</p>		
<p>Նկարագրել ուսումնական հաստատության առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը</p>		
<p>Դպրոցի աշխատանքների հասարակական վերահսկողությունն ապահովելու նպատակով դպրոցի ՕԽ-ի</p>		

նախագահն ընդգրկվել է մասնավարժական խորհրդի կազմում: Դպրոցի ԾԽ-ի անդամները դպրոցում քննարկվող տարբեր հարցերի կամ կազմակերպվող միջոցառումների մասին պարբերաբար տեղեկացնում են մյուս ծնողներին և նրանց ներգրավում են տարբեր աշխատանքների մեջ: Ծնողները տեղեկացվում են դպրոցական կյանքի բոլոր հարցերին նաև փոխտնօրենների, դաստ.աշխ.կազմակերպիչի, դասղեկների, ուսուցիչների, ԱԽ-ի անդամների, դպրոցի հետ համագործակցող ուստիկանության տեսուչի միջոցով: Տեղեկատվության մակարդակը բարձր հիմքերի վրա է:

Ծնողների ներգրավվածությունը. սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին, ներգրավվածության ձևերը

Նկարագրել արտադպրոցական և արտադասարանական աշխատանքները, որոնց մեջ վերջին 3 տարում ծնողները ներգրավված են եղել Սովորողների հանգստի, ժամանցի, մշակութային օջախներ այցելելի, հայրենագիտական ճամփորդությունների կազմակերպման աշխատանքներ	Ծնողների մասնակցության ձևերը և մասնակից ծնողների թիվը Զբաղվել են կազմակերպական հարցերով Միջինը՝ 80-100 ծնող	Ծնողների ներդրումների չափը	Մեկնաբանություններ Զբաղվել են կազմակերպական հարցերով, օգնություն են ցուցաբերել անապահով ընտանիքների երեխաներին
---	--	----------------------------	---

Մասնակցություն համադպրոցական, համայնքային, համաքաղաքային միջոցառումներին	Աջակցություն Միջինը՝ 50- ծնող		Ծնողները մասնակից են եղել համադպրոցական, համայնքային, համաքաղաքային բոլոր միջոցառումներին
--	-------------------------------	--	---

Թվարկել կայքերը, որոնցից օգտվում են ծնողները, օրինակ՝ <http://www.dasaran.am>, <http://ktak.am>, <http://www.armedu.am>, <http://forum.armedu.am/>, <http://lib.armedu.am>, հաստատության կայք և այլն, մեկնաբանել դրանց անհրաժեշտությունը և օգտակարությունը

Կայքը	Ամսաթիվ	Օգտվող ծնողների թիվը	Մեկնաբանություն
1. http://www.dasaran.am , www.atc.am , www.armedu.am www.118highschool.am	Ուստարվա ընթացք	90 / 36%	

Դպրոցը և ծնողական համայնքը համագործակցում են, և դպրոցը վարում է ակտիվ հասարակական կյանք:

Աղյուսակ 33. Տվյալներ դպրոցի և համայնքի համագործակցության վերաբերյալ

Ցուցանիշ			
Ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման աշխատանքներին համայնքի մասնակցությունը, մասնակցության ձևը և այդ գործում կատարված ներդրումները.			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցության դեպքերը, մասնակցության ձևերը	Ամսաթիվ	Ներդրման չափը	Մեկնաբանություն
1.Տնկիների, խոտի սերմի տրամադրում	2016 զարնանը	15	
2.Շենքի հետնամասի տարածքի մաքրման աշխատանքներ	Ուստարվա ընթացքում		
3.Աղբամանների տրամադրում, աղբահանություն	պարբերաբար		
Նկարագրել համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների տեղեկացվածության աստիճանը			
Ուսումնական հաստատության մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության համայնքի աշխատանքներին մասնակցության դեպքերը և դրանց ձևերը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների և աշխատողների տոկոսը	Մեկնաբանություն

<p>Համաքաղաքային շաբաթօրյակ</p>	<p>Յուր. ուստարի 14.11.2015թ. 09.04.2016թ. 12.11.2016թ. 15.04.2017թ. 27.05.2017թ. 16.09.2017թ. 07.10.2017թ. 16.09.2017թ. 23.09.2017թ. 07.10.2017թ. 11.11.2017թ. 25.11.2017թ. 28.12.2017թ. 17.03.2018թ</p>	<p>70%</p>	<p>Նպաստել սովորողների աշխատանքային դաստիարակությունը</p>
<p>Համաքաղաքային ծառատունկ</p> <p>Մասնակցություն համայնքում կազմակերպվող մշակութային միջոցառումներին (այցելություն համերգասրահներ, թանգարաններ, հանդիպումներ քաղաքի նշանավոր մարդկանց հետ)</p>	<p>2016 զարուն</p> <p>պարբերաբար</p>	<p>25%</p> <p>65%</p>	<p>Նպաստել սովորողների աշխատանքային դաստիարակությունը</p> <p>Նպաստել սովորողների գեղագիտական դաստիարակությունը</p>
<p>1. ՀՀ անկախությանը նվիրված համայնքային միջոցառում</p> <p>2. «Էրեբունի-Երևան» տոնին նվիրված համայնքային միջոցառում</p> <p>3. Ավետման օրվան, մայրության և գեղեցկության տոնին նվիրված համայնքային տոնական միջոցառում</p>	<p>21.09.2016թ. 21.09.2017թ.</p> <p>08.10.2016թ. 14.10.2017թ. 07.04.18թ.</p>	<p>30%</p> <p>25%</p> <p>35%</p> <p>30%</p> <p>25%</p>	
<p>4. Հայաստանի առաջին հանրապետության հռչակման օրվան նվիրված միջոցառում</p> <p>5. «Վերջին զանգի» համայնքային տոնախմբություն</p>	<p>28.05.17թ. 28.05. 18թ. 27.05.2017թ.</p>	<p>20%</p> <p>25%</p> <p>25%</p>	
<p>6. Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառում</p> <p>Մասնակցություն համայնքում կազմակերպվող սպորտային միջոցառումներին:</p> <p>Աջափնյակ կենտրոնական սպորտ հրապարակում տեղի ունեցած նոր սերնդի բակային մարզական խաղեր:</p> <p>Երևան քաղաքի դպրոցականների 26-րդ մարզական խաղեր:</p> <p>Աջափնյակ վարչական շրջանի դպրոցների միջև տեղի ունեցած ռազմամարզական խաղեր</p> <p>Ուսումնական հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները.</p>	<p>01.06.2017թ. 01.06.2018թ.</p> <p>պարբերաբար</p> <p>24.10.2015թ</p> <p>2017թ. ապրիլ</p> <p>2017թ. հոկտեմբեր</p>	<p>20%</p> <p>15%</p> <p>25%</p> <p>14%</p> <p>3%</p> <p>4%</p>	<p>Նպաստել սովորողների ֆիզիկական դաստիարակությունը</p>
<p>Նկարագրել վերջին 3 տարում հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները, նշել դրանց թիվը</p> <p>1. Սանիտարական օրեր</p>	<p>Ամսաթիվ</p> <p>Յուր. զարուն</p>	<p>Մասնակից սովորողների ու աշխատողների տոկոսը և համայնքի բնակիչների թիվը</p> <p>70%</p>	<p>Մեկնաբանություն</p>
<p>2. Համաքաղաքային ծառատունկ</p> <p>3. «Պայքար ծխելու դեմ». հակագովազդ</p> <p>4. «Մաքուր պահենք մեր քաղաքը»</p>	<p>Յուր. զարուն</p> <p>2015-2016</p> <p>2016-2017</p> <p>2017-2018</p> <p>2013-2017</p>	<p>25%</p> <p>25%</p> <p>22%</p> <p>20%</p> <p>70%</p>	


Համայնքի բնակիչները օգտվում են հաստատության մարզադահլիճից, ինտերնետից, գրադարանից և այլ հնարավորություններից			
Նկարագրել, թե հաստատության ինչպիսի ծառայություններից են օգտվում համայնքի բնակիչները	Հաճախականությունը՝ ամսական կամ տարեկան կտրվածքով	Օգտվող բնակիչների թիվը	Մեկնաբանություն
1. Համայնքի բնակիչ երեխաները օգտվում են մարզադահլիճից	Ամսական 8 անգամ	15-20	Մարզադպրոցի մարզիչն անցկացնում է բասկետբոլի պարապմունքներ
Ուսումնական հաստատության կողմից հասարակական կազմակերպությունների(ՀԿ) հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակից սովորողների թիվը՝ ըստ ծրագրերի			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության և ՀԿ-ների համատեղ իրականացված կրթական բոլոր ծրագրերը	Ծրագրի տևողությունը	ՀԿ –ի անվանումը	Մասնակից սովորողների թիվը
1.«Երիտասարդները նախաձեռնում են և տեղեկացնում» ծրագիր	2015թ. նոյեմբեր-դեկտեմբեր	«Երիտասարդական նախաձեռնություն» ՀԿ	7
2.«Ես աշակերտ եմ» տեղեկատվական ծրագիր	01.12.16թ. 18.12.17թ.	«Աշակերտների հայկական ասոցիացիա» կրթական հասարակական կազմակերպության	30 24
3. Երիտասարդության օրվան նվիրված տոնախմբություն	17.11. 2015թ. 17.11. 2016թ. 17.11.2017թ.	ՀԵՄ	17 10 15
4.Եվրոպական շաբաթվա շրջանակներում առողջապահական ծրագրի մասնակցություն, որի նպատակն էր ՄԻԱՎ-ի և հեպատիտ B-ի ու C-ի մասին մանրամասն տեղեկատվությունը	28.11.2015թ 01.12.2016թ.	ՀԵՄ	7 5
5.«Պատանի երկրապահ» ակումբի ստեղծում, սերժանտական դասընթացներ անցած պատանի երկրապահների երդման հանդիսավոր արարողություն	շարունակական 05.03.17թ. 05.03.18թ.	«ԵԿՄ» ՀԿ	5 7
6.Կրթական խորհրդատվական ծրագիր	Հունվար 2016թ	«Կրթական խորհրդատվական կենտրոն» ՀԿ	25
7. «Մեղու. հայերենը բոլորի համար» հայագիտական մրցույթ	2015թ. Հոկտեմբեր 27.10.16թ 26.10.17թ.	«Այբ» կրթական հիմնադրամ	11 6 2
8. «Ռուսական արջուկ» խաղ-մրցույթ	15.11.2016թ.	«Այբ» կրթական հիմնադրամ	3
9.«Կենգուրու» միջազգային մաթեմատիկական մրցույթ	2016թթ. Մարտ 16.03.2017թ. 15.03.2018թ,	«Այբ» կրթական հիմնադրամ	9 4 3
10.Կրթական ցուցահանդես	Յուր. ուստարի մարտ-ապրիլ	«ԴԻՋԻՏԵԶ ԷԲՍՊՈ» ՀԿ	20-30
11. «Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական IV փառատոն	26.10.16թ.	«Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան ՀԿ և «Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոն» ՀԿ	3
12. «Դպրոց -համալսարան» միջոցառում, վիկտորինա	19.10.2016թ.	ԵՊԲՀ –ի ընդհանուր բժշկության ֆակուլտետի ուսանողական խորհուրդ	20

13. Զրույց «Սկաուտների դերը և գործունեությունը» թեմայով	17.02.2017թ.	Հայաստանի ազգային սկաուտական կազմակերպություն	60
14. Սկաուտական դասընթացներ, գործնական պարապմունքներ	2016-2017թթ. ուստարվա ընթացք	Հայաստանի ազգային սկաուտական կազմակերպություն	20
15. «Խազեր» երգչախմբի բարեգործական համերգ	14.03.17թ.	«Խազեր» երգչախումբ	30
16. «Առաջին օգնության հիմունքներ» դասընթաց	17.03.17թ.	«Կարմիր խաչ» ՀԿ	21
17. «Առաջին անգամ ընտրող» իրազեկող ծրագիր	04-05-06.05 2017թ.	Եվրոպայի խորհրդի քաղաքական դասընթացների երևանյան դպրոց	60
18. «Ես բնագետ եմ» կոնֆերանս	20.05.2017թ. 14.04.2018թ.	«Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա», «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամ, «Մանկավարժական նախաձեռնություն հայկական ասոցիացիա», «Երիտասարդ քիմիկների ասոցիացիա»,	35 100
19. «Մասնագիտական կողմնորոշման» մեթոդական դասընթացներ	2016-2017 ուստարվա ընթացք	Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն ՊՈԱԿ	30
20. Ծաղկաձորում կազմակերպված ԱԽ-ի 5-րդ համաժողով	24.06.2017թ.	ՀԵՄ	1
21. Ծրագրավորման բաց դաս	21.10.2017թ.	Հայ-Հնդկական S2S Գերազանցության Կենտրոնի	3
22. «Կրթություն XXI դար EXPO 2018» յրթական ցուցահանդեսին:	22.03.18թ.	«ԴԻՋԻՏԵԶ ԷԲՍՊՈ» ՀԿ	25
23. «Կրթություն և Կարիերա EXPO 2018» 18-րդ միջազգային մասնագիտացված ցուցահանդես	12.04.2018թ.	«ԴԻՋԻՏԵԶ ԷԲՍՊՈ» ՀԿ	20

Մաս 6

Դպրոցի հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները

Կառուցվածքային սխեմա



Դպրոցի առաքելությունը

- Հետագա կյանքում սովորողների ինքնահաստատման համար անհրաժեշտ կարողությունների ձեռքբերման բարենպաստ կրթական միջավայրի ապահովում, միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորություն, արժեքային համակարգին ներկայացվող պահանջների բավարարում:

Նպատակն այստեղ այն արդյունքն է, որին հաստատությունը հույս ունի հասնելու մեկ տարում: Նպատակներն ուղենիշ են հանդիսանում տարբեր ուղղությունների պլանավորման համար:

Խնդիրները բխում են նպատակներից:

Դպրոցի առաջնահերթ նպատակները

Ոլորտ	Նպատակ
Ուսումնական (ֆիզիկական) միջավայր	Արդի կրթական պահանջներին բավարարող ուսումնական (ֆիզիկական) միջավայրի ապահովում: Մարզադահլիճի հիմնանորոգում. ցնցուղարանների, սանհանգույցների, հանդերձարանների ներկառուցում, մարզասարքերի ձեռքբերում:
Մանկավարժական համակազմ Նպատակ – կարողությունների ընդլայնում	Ուսուցիչների շարունակական մասնագիտական զարգացում, ինքնազարգացման ուղղությամբ աշխատանքների շարունակականության (առարկայական, մեթոդա-կան, S2S կիրառման ուղղությամբ) ապահովման և անհատական ուսումնական ծրագրերի իրականացման միջոցով ուսման որակի բարձրացում:
Նյութատեխնիկական (ռեսուրսներ) բազա	Առարկայական մեթոդավորումների կողմից ստեղծված դիդակտիկ նյութերով համալրում: Ապահովել S2S-ի մատչելիությունը և բարձրացնել սովորողների համար գրադարանային ծառայությունների որակը: Կատարելագործել ուսումնական պարապմունքների որակը՝ ընդլայնելով ուսումնառության հնարավորությունները, սովորողին ներգրավելով ուսուցման գործընթացի կազմակերպման գործում:
Ուսումնական գործընթաց	Ուսումնառության և ուսուցման որակի բարելավում՝ համագործակցային տեխնոլոգիաների կիրառմամբ: Ուսուցման ոչ դաս-դասարանային համակարգի ներդրման շարունակականության ապահովում՝ «սովորողը և՛ սովորող է, և՛ սովորեցնող, և՛ ուսումնական գործընթացի կազմակերպիչ» կարգախոսը իրականացնելով: Սովորողների կողմից մասնագիտական կողմնորոշման և նախամասնագիտական կրթության ուղղորդվածության համապատասխան մակարդակի ապահովում:
Դաստիարակության գործընթաց (արժեհամակարգի ձևավորում, քաղաքացիական կրթության ապահովում, համայնքային կյանքում ներգրավում):	Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտության զարգացում, վերլուծելու և քննադատելու կարողության ձևավորում, համայնք-դպրոց կապի ամրապնդում: Սովորող-ուսուցիչ, սովորող-սովորող, ծնող-ուսուցիչ աշխատանքային առողջ մթնոլորտի ապահովում: Սովորողների և աշխատակազմի առողջ ապրելակերպի, բարոյահոգեբանական պայմանների ապահովում:

Ստորև ներկայացված աղյուսակով նկարագրվում են իրավիճակի վերլուծության արդյունքները, հիմնախնդիրները: Առանձնացված են հիմնախնդիրների հաղթահարման նպատակով սահմանված խնդիրները:

Իրավիճակի վերլուծություն	Հիմնախնդիրներ	Նպատակ	Խնդիր
<ul style="list-style-type: none"> Դպրոցը կարիք ունի հիմնանորոգման, մարզադահլիճի, 2-րդ մասնաշենքի <ul style="list-style-type: none"> Դպրոցը ընտրել է բնագիտամաթեմատիկական ուղղվածություն, ունի հազեցած լաբորատորիաներ, սակայն վերջին երկու տարում բնագիտական և ֆիզմաթ ենթահոսքերում սովորողների թիվը փոքր էր /փոքր էր նաև սովորողների ընդհանուր թիվը՝ պայմանավորված 2006 թ. ընդունելության խնդիրներով: Դպրոցում սովորում են հիմնականում 14-18 տարեկան երեխաներ: Երեխայի տարիքային զարգացման հենց այս փուլում է ձևավորում հասարակական քաղաքացիական վարքը, անձը կայանում է իբրև անհատականություն: Երեխաների դաստիարակության հիմնական պատասխանատուները ծնողներն են սակայն նրանց զգալի մասը միշտ չէ, որ զբաղվում է երեխաների մեջ հասարակական-քաղաքացիական արժեքների ձևավորմամբ: Սովորողների արժեքային համակարգի ձևավորման խնդիրը լուրջ և համակարգային ուշադրության կարիք ունի: 	<ul style="list-style-type: none"> Ուսումնական ֆիզիկական միջավայրի անբավարարությունը խանգարում է ժամանակակից կրթական պահանջները բավարարելուն <ul style="list-style-type: none"> Հիմնական դպրոցների շրջանավարտների անիրագրելիությունը դպրոցի առաջարկած կրթական ծառայությունների տեսակի և որակի մասին Արժեհամակարգի ձևավորման բացթողումները բացասաբար են անդրադառնում սովորողի ինքնահաստատման, ինքնուրույնության, իբրև անհատ ձևավորման, վաղվա հասարակության լիարժեք անդամ դառնալու վրա 	<ul style="list-style-type: none"> Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական (ֆիզիկական) միջավայրի ապահովում <ul style="list-style-type: none"> Ապահովել հիմնական դպրոցի շրջանավարտների իրագրելումը դպրոցի առաջարկած կրթական ծառայությունների տեսակի և որակի մասին Ծնողների հետ համագործակցության միջոցով հասնել սովորողների՝ հանրակրթության պետական չափորոշիչներով սահմանված արժեհամակարգի ձևավորմանը, նրանց մեջ զարգացնել հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու, իբրև անհատ կայանալու հմտություններ: 	<ul style="list-style-type: none"> Դպրոցի մարզադահլիճի, 2-րդ մասնաշենքի հիմնանորոգման առաջնայնություն <ul style="list-style-type: none"> Համագործակցություն հիմնական դպրոցների հետ՝ բնագիտական առարկաների լաբորատոր աշխատանքների կազմակերպման գործում Մշակել և ներդնել դաստիարակության արդյունավետ մեխանիզմներ <ul style="list-style-type: none"> Աշխատանք տանել սովորողների քաղաքացիական իրավագիտակցությունը բարձրացնելու ուղղությամբ ոչ միայն (և ոչ այնքան) «Հասարակագիտություն» առարկայի ուսումնասիրմամբ, այլև ամբողջ ուսումնական գործընթացի ընթացքում Համագործակցել սովորողների ակտիվությունը խթանող, քաղաքացիական գիտակցության ձևավորմանը նպաստող երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ:

Ուժեղ կողմեր

1. Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր՝ տարանջատել վարչական, ուսումնաօժանդակ և ուսուցչական կազմը

- Դպրոցի վարչական կազմը՝ տնօրեն, ուսումնական աշխատանքի գծով տեղակալներ, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, ունեն հստակ ձևակերպված պարտականություններ: Անմիջականորեն նպաստում են ուսուցիչների դասավանդման և սովորողների ուսումնառության որակի բարձրացմանը՝ համակազմի շահադրդման (մոտիվացիայի), նվիրվածության և աշխատանքային պայմանների վրա ունեցած իրենց ազդեցությամբ: Ջարգացնում են դրական փոխհարաբերություններ և շփումներ, ձևավորում համագործակցային փոխհարաբերություններ, խթանում ուսուցման համագործակցային մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում: Մտեղծում են դպրոցի մշակույթի հենքը, ձևավորում սովորողի արժեհամակարգը, ապահովում բաց միջավայր: 2018 թ. հունիսին դպրոցի բոլոր ուսուցիչների համար (բացառությամբ ֆիզկուլտուրայի և ՆՁԳ-ի ուսուցիչների) կազմակերպվել են ինտերակտիվ սեմինար պարապմունքներ ոչ դաս-դասարանային համակարգին բնորոշ մանկավարժական տեխնոլոգիաների և մեթոդիկաների կիրառման, տարբեր մեթոդիկաների կիրառմամբ ուսումնական պարապմունքներ կազմակերպելու հմտությունների ձևավորման և զարգացման նպատակով:

- Ուսուցիչների գերակշիռ մասն ունի բարձր մասնագիտական պատրաստվածություն, մարտահրավերներին դիմագրավելու պատրաստակամություն, ուսուցման ընթացքում կիրառում է աշակերտակենտրոն ուսուցման մեթոդներ՝ ուսուցման ոչ դաս-դասարանային եղանակին բնորոշ մեթոդիկաներ և տեխնոլոգիաներ՝ ապահովելով յուրաքանչյուր սովորողի ուսումնառության անհատական ծրագրի իրականացումը, հաշվի առնելով սովորողի առանձնահատկությունները, ունի ՏՀՏ կիրառելու հմտություն, տիրապետում է գնահատման մեթոդաբանությանը և հիմնականում կարողանում է ճիշտ և արդյունավետ կիրառել այն, դասավանդելիս հիմնականում առաջնորդվում է առարկայական չափորոշիչների պահանջներով: Դպրոցի բոլոր ուսուցիչները համապատասխանում են զբաղեցրած պաշտոնին, նրանցից 13 ուսուցիչներ (ուսուցիչների 48 տոկոսը) ունեն որակավորման տարակարգի առաջին աստիճան:

Թույլ կողմեր

1. Աշխատակազմի գործունեության թույլ կողմեր՝ տարանջատել վարչական, ուսումնաօժանդակ և ուսուցչական կազմը

- Ներդպրոցական վերահսկողության կազմակերպման ժամանակակից մեթոդների ուսումնասիրումը և կիրառումը, արդյունքների վերլուծության հիման վրա թույլ կողմերը ուժեղացնելուն միտված նախաձեռնությունների պակասը: Սովորողի արժեհամակարգի ձևավորմանը միտված բազմակողմանի միջոցառումների պակասը:

- Միշտ չէ, որ ուսուցիչները (դասղեկները) մասնակցում են ամենօրյա և ամենշաբաթյա ռեֆլեքսիաներին և (կամ) ուսումնական խմբերում կազմակերպում են ռեֆլեքսիաներ (ինքնասանդրադարձ վերլուծություն), որոնք նպաստում են ուսումնական խմբի ուսուցման կազմակերպման արդյունավետության բարձրացմանը: Բացակայում է այս աշխատանքը վերահսկելու մեխանիզմը:

- Ուսումնասովանողակ կազմը ունի պարտքի և պատասխանատվության զգացում և բարեխղճորեն իրականացնում է իր աշխատանքային պարտականությունները:

2.Սովորողների ուսումնառության և այլ գործունեության ուժեղ կողմեր

- Դպրոցում ուսումնական պարապմունքների հիմնական ձևը կոլեկտիվ (ոչ դաս-դասարանային) ուսումնական պարապմունքն է, երբ սովորողը և՛ սովորող է, և՛ սովորեցնող, և՛ ուսումնական գործընթացի կազմակերպիչ: Ուսումնառության ընթացքում ձևավորվում են սովորողի ոչ միայն գիտելիքները, այլև ուսուցանելու, ընկերոջից սովորելու, փոփոխական կազմով զույգերում և խմբերում աշխատելու կարողություններ և հմտություններ:

3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի, այլ մարմինների գործունեության ուժեղ կողմեր

- Դպրոցում գործում է աշակետական և ծնողական խորհուրդ: Աշակերտական խորհրդի գործունեությունը իրականանում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում է սովորողների կարիքները: Աշակերտական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, սովորողների, ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում՝ ծավալելով հանրօգուտ աշխատանք:

- Ծնողական խորհուրդը հիմնականում համագործակցում է դպրոցի կառավարման խորհրդի, մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ, աջակցում սովորողների հետ ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

- Դպրոցը համագործակցում է համայնքի հետ և հաճախակի հանդես գալիս նախաձեռնություններով:

- Դպրոցի կառավարման խորհուրդը կազմված է բանհմաց, գրագետ, դպրոցի արդյունավետ գործունեության համար սրտացավ անդամներից. խորհրդում հանգամանորեն քննարկվում և լուծում են ստանում օրակարգային հարցերն ու խնդիրները:

4.Ռեսուրսներով ապահովվածությունը

- Դպրոցն ունի մարզադահլիճ, պատշաճ կահավորված հանդիսությունների դահլիճ,

- Ուսումնասովանողակ կազմի աշխատանքը նախաձեռնողական բնույթ չի կրում:

2.Սովորողների ուսումնառության և այլ գործունեության թույլ կողմեր

- Դպրոցի ավարտական (12-րդ) դասարաններում նվազում է սովորողների հանրակրթական առարկաների յուրացման ձգտումը՝ պայմանավորված բուհ ընդունվելու համար անհրաժեշտ առարկաների նկատմամբ ուշադրության մեծացմամբ:

3. Ծնողների, համայնքի, կառավարման խորհրդի, այլ մարմինների գործունեության թույլ կողմեր

- Սովորողների ակտիվությունը իթանող, քաղաքացիական գիտակցության ձևավորմանը նպաստող երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը բավարար մակարդակի վրա չէ:

- Փոքր է ծնողների ակտիվությունը սովորողների դպրոցական և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպելու գործում:

4.Ռեսուրսներով ապահովվածության խնդիրները

- Դպրոցի մարզադահլիճը առանձին մասնաշենքում է, որը հիմնանորոգվել է

համակարգչային 2 կաբինետ, 22 նոութբուք, 31 համակարգիչ, 7 ինտերակտիվ գրատախտակ, 8 տեսապրոեկտոր, 1 ինտերակտիվ պրոեկտոր, քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի հազեցած ուսումնական լաբորատորիաներ, ուսումնական և գեղարվեստական գրականությամբ հազեցած գրադարան: Դպրոցն ապահովված է դասագրքերով, այլ ուսումնական գրականությամբ:

5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ հաջողությունները

• Դպրոցը նոր պահանջների փոփոխություններին համընթաց քայլող դպրոց է: Ավագ դպրոցում ներդրվում է ուսուցման կոլեկտիվ եղանակը, որի գաղափարախոսական հենքը համագործակցությունն է. սովորողն իր կրթական պահանջները բավարարում է ուսուցչի և այլ սովորողների օգնությամբ, և ինքն էլ օգնում է մյուսներին՝ բավարարելու իրենց կրթական պահանջները: Նա և՛ սովորող է, և՛ սովորեցնող, և՛ կրթական գործընթացի կազմակերպման մասնակից:
Հաշվետու ուստարում դպրոցը նախա-ձեռնել է համագործակցություն հիմնա-կան դպրոցների հետ՝ նրանց սովորող-ների համար կազմակերպելով բնագի-տական առարկաների լաբորատոր փորձեր դպրոցի հազեցած լաբորատորիաներում, ինչպես նաև ռազմագի-տության դասընթացի շրջանակներում՝ վարժասարքի միջոցով հրաձգության վարժանքներ կազմակերպելով:
Դպրոցը համագործակցում է ԵՊՀ-ի և ԵՊԲՀ-ի հետ:

1. Հաղորդակցության, համագործակցության ուժեղ կողմերը

Դպրոցում կիրառվող ուսուցման կոլեկտիվ եղանակի հենքը ինքնին հաղորդակցությունն է և համագործակցությունը: Ի տարբերություն ուսուցման խմբային եղանակի՝ այստեղ հենց ուսուցման գործընթացն է կազմակերպվում այնպես, որ անհնար է առանց հաղորդակցման և համագործակցության: Դպրոցում համագործակցային, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլո-գիաների կիրառումը նպաստում է ստեղծագործական ու նորարարական մտեցումների զարգացմանը:

• Համագործակցային, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպատակաուղղված է իրազեկ, տեխնոլոգիական

2008 թ. , սակայն, չնայած ամենամյա մասնակի նորոգումներին, ոչ բարվոք վիճակում է խոնավության հետևանքով. շենքը կարիք ունի վերակառուցման և հիմնանորոգման: Մարզադահլիճը ապահովված չէ բավարար կահավորված հանդերձարաններով, չկան ցնցուղներ և այլն:

• Գրադարանի տարածքը փոքր է ժամանակակից տեխնիկայով և տեխնոլոգիաներով հազեցած ընթերցասրահ ձևավորելու համար:

5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ թույլ կողմերը

• Դպրոցը նոր նախաձեռնություններն իրականացնում է բացառապես աշխատակազմի կամավոր անվճար, թեպետև ծանր աշխատանքի շնորհիվ. դպրոցի ֆինանսական միջոցները հնարավորություն չեն տալիս լիարժեք խրախուսել աշխատակազմի նախաձեռնությունները:

ձեռքբերումներն արդյունավետ գործածելու ունակություն ունեցող, բարոյական և օրինապահ այնպիսի անհատի դաստիարակմանը, որը կկարողանա ինքնուրույն ձեռք բերել, կառավարել, մշակել, գնահատել, վերլուծել տեղեկատվությունը և դրա հիման վրա ինքնուրույն որոշում կայացնել, այնպիսի անհատի դաստիարակմանը, որը գիտակցում է սեփական պատասխանատվությունը երկրի շահերի, ավանդույթների և արժեքների նկատմամբ, ինքն է ստեղծում արժեքներ և սեփական լուրման է ներդնում հասարակության առաջընթացի գործում:

7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված հաջողությունները

- Պետբյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները:

7. Բյուջեի, ֆինանսական միջոցների հետ կապված դժվարությունները և խնդիրները

- Ֆինանսական միջոցները չեն բավարարում անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման համար: Դպրոցի ֆինանսավորումը սահմանափակ է և բավարարում է հիմնականում աշխատավարձի, կոմունալ, գրենական, տնտեսական ծախսերի որոշ մասի համար: